№ 96 ԿԻՐԱԿԻ ՄԱՅԻՍԻ 4

1908

ԿԻՐԱԿԻ ՄԱՅԻՍԻ 4 № 96

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 7 ՌՈՒԲԼԻ
Ամսական մէկ ռուբլի
Ամերիկա տարեկան . 6 դօլլար
Եւրօպա » . . 30 ֆրանկ
Պարսկաստան » . 10 ռուբլի

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ
ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ
ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՕԳՏԻՆ
Մայիսի 4-ին, կիրակի, կայանալու է
ՄԱՅԻՍԵԱՆ
ԶԲՕՍԱՆՔ
Սինեմատօգրաֆ (դրումօնդեան լուսաւորութեամբ)
ՎԻՃԱԿԱԽԱՂ, կարթ, petits chevaux, պետրուշկա,
մանկական խաղեր ուսուցչուհիների ղեկավարութեամբ,
երկու խումբ երաժիշտների և պարեր։
Մուտքը մեծերի համար 30 կոպէկ.
Աշակերտների և երեխաների համար 15 կոպէկ։
ԶԲՕՍԱՆՔԻ սկիզբն է ժամը 3-ին
Դրամական և իրերի նուիրատուութիւնները շնորհակալութեամբ ընդունվում են
արհեստանոցում, Գանօվսկայա փողոց № 19.
(կ. ու. կ.) 3—3

Հինգշաբթի, մայիսի 8-ին
Թիֆլիսի ժողովարանի ամառային շինութեան մէջ
ՕԳՈՒՏ
Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան
տեղի կունենայ
ՄԵԾ
ԶԲՕՍԱՆՔ
Վիճակախաղ-ալեգրիով, սինեմատօգրաֆ
Ս. Օ. ԻՎԱՆԻՑԿՕՅԻ
ՊԱՐԵՐ, օղակի խաղ, ֆրանսիական կարթի խաղ, չատտուածուհու գնացք ծաղիկներով, երեխաների գնացք դրօշակներով և երեխաների խաղեր ղեկավարութեամբ տիկին
Վ. Ս. ԶՄՇԿԵԱՆԻ
Երկու խումբ երաժշտութիւն
Սկիզբն է ժամը 4-ին ցերեկվայ
Մուտքի վճարը մեծերի համար 25 կ., երեխաներին 15 կ.։
(կ. հ.) ա. 2—1

ԵՐԵՔՇԱԲԹԻ, ՄԱՅԻՍԻ 6-ԻՆ
Թիֆլ. Ժողովարանի այգում
Ս. Նշանի դպրոցի չքաւոր աշակերտուհիների
օգտին
կը կայանայ
ԶԲՕՍԱՆՔ
„ԾԱՂԻԿՆԵՐԻ
ՏՕՆԸ"
Հետևեալ ծրագրով.
1) ՎԻՃԱԿԱԽԱՂ
2) ծաղկամարտ, 3) օղամարտ, 4) ձիարշաւ, 5) օձամարտ, 6) բաղդի տակառ, 7) կարթ, 8) կօնֆէտի և այլն։
Երեկոյեան ժամը 7-ին տեղի կունենայ
ԾԱՂԻԿՆԵՐԻ ԳՆԱՑՔԸ
լապտերներով, դրօշակներով, որին կը մասնակցեն ծաղիկներով զարդարված երեխաները մինչև 10 տարեկան։
Լաւագոյն և ամենաճաշակաւոր ծաղիկներով զարդարված մանկական գլխազարդերը կարժանանան
Երկու արժէքաւոր պրէմիաների։
Երաժշտութիւն՝ եւրօպական և ասիական։
ՊԱՐԵՐ
Սկիզբն է ժամը 3½-ին ճաշից յետոյ
Մուտքն արժէ՝ երեխաների և աշակերտների համար 15 կ., հասակաւորների համար 30 կ.։
(շ. կ. ե.) առ. 3—2

Նկարիչ ԱՐՇԱԿ ՖԷԹՎԱՃԵԱՆԻ
ՋՈՒՐ
ԱԿՎԱՐԷԼՆԵՐԻ
Ցուցահանդէսը
բաց կը մնայ մինչև կիրակի մայիսի, 4-ը։
Կովկասեան գիւղատնտեսական կայսերական ընկերութեան դահլիճներում.
Բարեատինսկայա փողոց.
Ցուցահանդէսը բաց է ամեն օր առաւօտեան ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 5-ը։
Մուտքը արժէ 30 կոպէկ։
Աշակերտները և զինուորները վճարում են կէսը։
(ա. օ.) առ. 20—18

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ
ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ
Հոգաբարձութիւնը
յայտնում է, որ էկստերն քննութիւն տուողները իրանց խնդիրները պէտք է ներկայացնեն մինչև մայիսի 10-ը, որից յետոյ կը սկսվեն քննութիւնները և կը վերջանան մայիսի 20-ին։
(չ. կ.) ա. 2—2

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. Բաբայեանը
այս ամառ շարունակելու է ընդունել ներքին և ջղային հիւանդներ Կիսլօվօդսկում և Էսսենտուկում, մայիսի 16-ից մինչև սեպտեմբերի 15-ը։
[չ. ու. կ.] ա. 12—3

Լոյս տեսաւ
„ԾԻԾԱՂԱԲԵՐ"
Հայրիկ, Պարոնեան, Պըլը-Պուղի, Մօլլա-Նասր-Էդդին և ուրիշ ազգային ու օտար զուարճախօսներ։
182 ԸՆՏԻՐ զուարճախօսութիւն—անեկդօտներ, 112 երես, գինը՝ 20 կոպէկ։
Դիմել գրավաճառներին։ Ինձնից գումարով գնողներին 20% զեղչ և ճանապարհածախսը իմ հաշւին։ Մշտական հասցէս՝ Тифлисъ, Хачатуру Хачатріанъ, 9 уч. Лысогорскій пер. № 10.
(չ. ու. կ.) (առ.) 10—6

Ի՞ՆՉ ՎԻՃԱԿԻ ՄԷՋ Է

Սկսած մայիսից առանձին հետաքրքրութիւն են ստանում գաւառական այն լուրերը, որոնք վերաբերում են մեր երկրի բուսականութեան վիճակին։

Մանաւանդ այս տարի շատ կարևոր և էական են այդ լուրերը։

Այն ծանր տարիներից յետոյ, որ մենք անցանք, այն սոսկալի և կործանարար աղէտներից յետոյ, որ մենք կրեցինք անթիւ զրկանքներով, մեզնից իւրաքանչիւրը մի առանձին ուշադրութեամբ և անձկութեամբ սպասում է լուրերի գաւառներից՝ թէ ինչ դրութեան մէջ են արտերը, մարգագետինները, արօտները և առհասարակ երկրագործի տնտեսութիւնը։

Առաջին լուրերը ընդհանրապէս նպաստաւոր են բուսականութեան վերաբերութեամբ. բայց կան և աննպաստ վկայութիւններ։

Շնորհիւ ձիւնի առատութեան և գարնան անձրևների յորդութեան՝ բուսականութիւնը ջրի պակասութիւն չէ զգացել, աջող աճել է և երաշտի վտանգից ազատ է եղել։

Աշնանացանը բարձրացել է և զարգացել, մարգագետինների խոտը բուսել է առատ և խիտ կերպով։ Եւ անկասկած՝ եթէ մայիսը աղէտալի անակնկալներ չը բերէ, մեր երկրի այն գօտէ շրջանը, ուր գտնվում է լեռնալանջերի ստորին մասերի վարուցանքսը, կարող կը լինի արդիւնաբերել առատ հունձ գիւղացու համար։

Գանձակի, Ղազախի, Բօրչալուի, Ալէքսանդրօպօլի և Ախալցխայի գաւառներից մենք արդէն ունենք տեղեկութիւններ ցանքսերի աջող աճման մասին։ Աննպաստ են Բօրչալուի գաւառի մի մասից ստացված տեղեկութիւնները, որտեղ ցանքսերը դուրս են եկել վտիտ և նօսր։

Անշուշտ՝ մայիսի սկզբի լուրերը փոքր ի շատէ որոշ կարող են լինել միայն ստորադիր տեղերի համար, որտեղ գարունը վաղ է բացվում և բոյսերը վաղ են սկսում զարգանալ։ Իսկ աւելի բարձրադիր շրջանների համար ներկայ բոպէի ցուցումները դեռ վաղաժամ են լուրջ եզրակացութիւններ անելու համար, որովհետև այդտեղ արտերի բուսականութիւնը կամ նոր է սկսել աճել կամ դեռ բոլորովին ընթացք չէ ստացել ուշ սերմացանութեան պատճառով։ Լեռնային բարձր շրջաններում սերմացանութիւնը վերջանում է միայն յունիսի սկիզբներին։

Մի հանգամանք պէտք է աչքի առաջ ունենալ ամեն ժամանակ. դա գիւղական տնտեսութեան վատթարացած և չափազանց նեղ վիճակն է, որի պատճառով գիւղացին անկարող է հանդիսանում մշակել շատ հող և սերմանել նրան առատօրէն։

Ուստի նոյնիսկ աջող հունձ ստանալու դէպքում էլ գիւղական շտեմարանները չեն լցվի մթերքներով այն քանակով, ինչպիսին լինում էր նախկին առատ տարիներում։

Իսկ եթէ ամառվայ ամիսների ընթացքում տեղի կունենան ձախորդ երևոյթներ, այն ժամանակ մենք դարձեալ կը շարունակենք սուր կարիքի մէջ լինել, ինչպէս վերջին երկու տարիները, որոնք ուժասպառ արին մեր երկրի ժողովրդին։

Մենք յոյս ունենք, որ գաւառական մեր աշխատակիցները տեղեկութիւններ կը տան բերքին վերաբերեալ խոշոր փոփոխութիւնների նկատմամբ և մեզ իրազեկ կը պահեն մեր գիւղացու տնտեսական վիճակի մասին։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեզ հաղորդում են, որ Ալէքսանդր Ստեփանիչ Անանեան, որ այս տարվայ սկզբին 30,000 ռուբլի նուիրեց Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան, մի նոր նուիրատուութիւն է արել։ Նա նուիրել է հինգ հազար (5000) ռուբլի Թիֆլիսի հայուհեաց բարեգործական ընկերութեան և հինգ հազար (5000) ռուբլի էժանագին ճաշարանին։

—

Սիմլա, 3 մայիսի

Կաբուլից ստացված արժանահաւատ տեղեկութիւնների համաձայն, աւղանական էմիրը մի շատ խիստ հրաման է արձակել, որով նախազգուշացնում է.—ով ապստամբ ճառեր կարտասանէ՝ նրա լեզուն կը կտրվի, ով կը հեռանայ Կաբուլից ապստամբներին միանալու համար՝ նրա ոտքերը կը կտրվեն։

Ջալալ-Աբադ է ուղարկված նոյն տեսակի խիստ հրաման, որով արգելվում է ռազմամթերքներ և հրացաններ վաճառել ապստամբ ցեղերին։ («Հ. Գ.»)

—

Վաշինգտոն, 3 մայիսի

Ապրիլի 30-ին Րուզվէլտը բացեց այն կոնֆերենցիան, որ քննելու է ազգային հարստութիւնները պահպանելու հարցը։ Կոնֆերենցիային մասնակցում են նահանգապետները և զանազան նահանգներից տեղեակ անձինք։

Րուզվէլտը ճառ արտասանեց, որով մատնանշեց, որ հարցը ներկայումս ամենակարևոր նշանակութիւն ունի, նկատի առնելով որ արագութեամբ քայքայվում են երկրի բնական հարստութիւնները, որոնց վրա հիմնվում է ազգի հզօրութեան հիմնաքարը, նրա գոյութեան գրաւականը։ («Հ. Գ.»)

—

Բերլին, 3 մայիսի

Վօլֆին հաղորդում են Ձանխայից, որ Խանկօյում ոստիկանութեան մի կարգադրութեան պատճառով անկարգութիւններ են ծագել։ Կուլիների ամբոխը, թւով մօտ 5000 մարդ, ըսկսել է կողոպտել կրպակները, ի թիւս որոնց շատ եապօնական խանութներ։ Ուչանից անմիջապէս ուղարկել են մի բատալիօն զինուորներ և չինական մի նաւ։ Ու այժմ հանգստութիւնը չէ վերահաստատված։ («Հ. Գ.»)

—

Բերլին, 3 մայիսի

Վօլֆին հեռագրում են Ձանխայից, որ Իւնանի գաւառի ապստամբները շարժվել են դէպի հիւսիս։ Դէպի հարաւ Մէնցզից սկսվող ճանապարհները կտրված են, ուստի և հնարաւորութիւն չը կայ տեղեկութիւններ ստանալ ապստամբների շարժման մասին։

Ապստամբների ղեկավարները խըստագոյն կերպով պատուիրագրել են ձեռք չը տալ օտարազգիներին, չը կողոպտել և չը կործանել եկեղեցիները. եթէ օտարազգիները աջակցեն կառավարութեան, այն ժամանակ նրանց հետ պէտք է վարվել ինչպէս գերիների հետ։ («Հ. Գ.»)

—

Ալժիր, 3 մայիսի

Ֆրանսիական զօրքերը մայիսի 1-ին ռմբակոծեցին Բուդէնիբը։ 13 մարդ սպանված են, 65-ը վիրաւորված։ («Հ. Գ.»)

—

Գերմանական ժուռնալիստ Գարդենի արած մերկացումները պալատական շրջաններում ազդեցիկ դեր խաղացող արիստոկրատների մտաւոր կեանքից՝ ահագին աղմուկ յարուցել։ Մամուլի և հասարակական կարծիքի ճնշմամբ դատախազութիւնը ստիպված էր խիստ քննութիւն կատարել իշխ. Էյլենբուրգի մասին և, վկաներով փաստերը հաստատելուց յետոյ, կալանաւորել նրան։

Արիստոկրատական շրջաններում իշխ. Էյլենբուրգի կալանաւորութիւնը սաստիկ զայրոյթ է առաջացրել։ Նրանք յոյս են դնում Վիլհէլմ կայսրի գթասրտութեան վրա, որը սեփական իշխանութեամբ կարող է վերջ տալ սկանդալին։

Հեռագրով դիմել են կայսրին և հարցրել. «Ինչպէ՞ս վարվել կալանաւորի հետ»։

Կայսրը պատասխանել է. «Իբրև մի սովորական յանցաւորի հետ»։ Առաջարկված կէս միլիոն մարկ գրաւականը իշխանին երաշխաւորութեամբ ազատելու համար մերժված է դատախազութեան կողմից։

Էյլենբուրգը առայժմ կալանաւորված է պահվում։ Գործը քննվելու է աշնանը։

—

Ռումինիայի Բիվալլա և Ռադօկին քաղաքների հրէաներին հրամայված է անմիջապէս դուրս գալ մայրաքաղաքից։ Հրէաների մէջ սաստիկ իրարանցում է տիրում։

—

Ուրմի, 16 ապրիլի

Կացութիւնն Ուրմիում այժմ աւելի քան երբևիցէ անտանելի է. ալան-թալան, աւեր, սպանութիւն. ահա նրա իրականութիւնը։ Չը կայ կեանքի և ինչքի ապահովութիւն։

Վերջին երկու շաբաթվայ ընթացքում, որչափ կարողացել եմ հասկանալ, Ուրմի-Սալմաստ ճանապարհի երկարութեան վրա գտնվող գիւղերից յարձակման են ենթարկվել հետևեալ գիւղերը. մարտի 27 լոյս 28-ի գիշեր թալանվեց Իքի-Աղաջ գիւղը, 29—30-ին՝ կրկին Իքի-Աղաջ գիւղը։ Ապրիլի 1-ին Շումբուլաղ և Ալիբայլու գիւղերը, 2-ին՝ ցերեկով ճանապարհից քշեցին տարան 7 ուղտ իրանց բեռներով. ապրիլի 7-ի առաւօտեան Քաչալ-Ալու և Կըրչալու գիւղերի նախիրները տարան. 7—8-ի գիշեր Խալթուա գիւղը թալանվեց. այդ գիւղում գիւղացիները սպանեցին քիւրդերից 7—8 հոգի։ 9—10-ի գիշերը Քաչալ-Ալու և 10-ին՝ օրը ցերեկով քշեցին Խանագա և Քարնապադ գիւղերի նախիրները։

Սարսափած գիւղացիները վարուցանքի օրերին թողնում են տուն ու տեղ և փախչում ոմանք դէպի քաղաք և ոմանք էլ դէպի ծովեզերեայ գիւղեր, բայց եթէ երկիրն այս վիճակի մէջ մնայ և կառավարութիւնը շարունակէ աչք գոցելու քաղաքականութիւնը, կարելի է ասել որ ոչ մի գիւղ ազատ չը պիտի մնայ։ Թալանվում է թէ հայը, թէ ասորին, թէ շիան և թէ սիւննին։

Բկացուն էլ իր հունձն է անում։

Լևոն Աճէմեան

ՍՈՎԸ ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ *)

Մշոյ առաջն. փոխանորդը կը գրէ փետր. 4 թուականաւ. «Հացակարօտ աղքատներու վիճակը երթալով անտանելի կը դառնայ. սոսկալի է անօթիներու վիճակը, որոնք դժբաղդաբար հազարներով կը համրուին։ Այս տարի երբէք բաւարար նպաստ չեկաւ, մանաւանդ աշնանէ ի վեր. անօթութենէ մեռնողներ կան. կը ցաւինք ըսել որ անօթութեան զոհերու թիւը կը շատնայ։ Դաշտի Ալիճան գիւղացիք կը ծանուցանեն, թէ յունուար 2-ին Մլքօ Մարգարեան և կինը Հաֆսօ, յունուար 11-ին Պօղոս Աղօեան, Խանտիլ Մարգարեան և Սայեաթ Բաթօեան անօթի մեռած են։ Նոյն տեսակ գրոյցներ կըլլան նաև քաղաքի թաղերէ և ուրիշ տեղերէ։ Կը սոսկանք նորանոր հետևանքներէ, կաղաչենք բաւարար նպաստ հասցնել. հակառակ պարագային չենք կըրնար պատասխանատու մնալ»։

Մշոյ Վարդենիս գիւղէն կը գրեն յունուար 28 թուականաւ. «Աչքով կը տեսնենք մուրացիկներու հոծ բազմութիւնը, ականջով կը լսենք մանկանց հեծեծագին լացն ու պաղատանքը՝ «մայր, հաց տուր ինձ»։ Մայրը աղեխարշ գետին կը տապալի. մայրական գութը կը տոչորէ անոր աղիքները, կը մարի կը մեռնի. քանի քանի անհատներ՝ երիտասարդներ և պատանիներ՝ մեռած են սովէն, և մեր ձեռքով հողին աւանդած ենք։ Ի՞նչպէս անտարբեր մնանք և ի՞նչպէս ապրին, քանի որ հացագինն օրըստօրէ կը բարձրանայ։ 250 տունէ բաղկացեալ գիւղէ մը լոկ 6—7 լուծք կելնէ, և այդ արդիւնքով հազարաւոր անձինք պիտի ապրին. օրական պատառ մը հացի ախը կը քաշէ ժողովուրդը. օգնեցէք մեզ, ապրելու համար մինչև գարուն»։

Վանայ առաջն. տեղապահը յունուար 14 թուականաւ կը գրէ. «Կարօտեալներու թիւը մեծ համեմատութիւն կառնէ, գիւղերէն սաստիկ սովու և սովամահի լուրեր կը հասնին, և կարօտեալք քաղաքս լեցուած են. միայն քաղաքիս մէջ 5000-է աւելի անձինք ցուցակագրուեցան, կարօտ չորաբեկ հացի. գիւղերու մէջ աւելի սաստիկ է կարօտութիւնը. կը խնդրենք նոր օգնութիւն և կարեոր գումարներ փութացնել՝ ազատելու համար Վասպուրականի սովատանջ ժողովուրդը սովու և կարօտութեան սոսկալի ճիրաններէն»։

---

*) «Մշակի» երէկվայ համարով (№ 95) մենք հաղորդել էինք, որ Հանգանակիչ Մասնաժողովը Կ. Պոլսի հայոց պատրիարքարանից ստացել է այն դիմումների ամփոփումը, որոնք Թիւրքահայաստանի զանազան կէտերից ստացվել են պատրիարքարանում և որոնցով պարզվում է այն լուրջ ու ծանր դրութիւնը, որի մէջ հեծում է այդ դժբաղդ երկրի հայութիւնը։ Այս ներկայ գրութիւնը Հանգանակիչ Մասնաժողովի՝ Օրմանեան պատրիարքից ստացած հէնց այդ ամփոփումն է։ Խմբ.

Բաղէշի առաջն. փոխանորդը կը գրէ դեկտ. 29 Թուականաւ. «Ճշմարիտ է որ աղքատութիւնն ի գաւառս տարածուած է, սակայն հարկ է գիտնալ, որ Բաղէշի երկրաշարժէ արկածեալ ժողովուրդը շատ աղէտալի և դառն կացութեան մը մատնուած է տիրող սղութեան պատճառաւ, մանաւանդ որ ձմեռնային այս եղանակին սնունդ և վառելիք տարապայման սղած են. դժբաղդաբար՝ գործ և աշխատութիւն բոլորովին դադրած լինելով օրական հարիւրաւոր կարօտեալներ առաջնորդարանի դուռը շըրջապատած՝ հաց կը խնդրեն և շատերն իսկ հոն կիյնան նուաղեալ։ Կը խնդրենք Թախանձագին՝ գէթ ժամանակ մը ժողովուրդն ապրեցնելու համար օգնութիւն ընձեռել»։

Ալաշկերտի փոխ-առաջնորդը փետր. 14 Թուականաւ կը գրէ. «Տիրող ձմեռուան խըստութիւնը տակաւ կը շատնայ, և 130 տան բնակչութենէ 73 տուն այսօր մերկ, նօթի, առանց վառելանիւթի մնացած են. տասնեակ մանուկներով ընտանիքներ կան, որոնք վիշեր-ցերեկ օգնութիւն կաղաղակեն. եթէ ձեռնտուութիւն մը չլինի այս թըշուառներու, մահը անոյի պիտի ունենան»։

Մալաթիոյ առաջն. փոխանորդը կը գրէ փետր. 2 Թուականաւ. «Մէկ կողմէն ուտելիքի և վառելանիւթերու արտասովոր սղութիւնը և միւս կողմէ ներկայ ձմեռուան սաստկութիւնը՝ աղքատներու թիւը բազմապատկեցին, և յոյժ սրտաճմլիկ ու աղեխարշ տեսարաններ կը պարզուին։ Այս աղքատներու կեանքը ցուրտէ և նօթութենէ փրկելու համար տեղական միջոցները խիստ անբաւական են. եթէ մասնաւոր օգնութիւն մը չփութացուի, խղճալի ու աննկարագրելի հետևանքներ յառաջ պիտի գան»։

Բինկեանէն կը գրեն փետր. 14 Թուականաւ. «Իբր անխուսափելի հետևանքը մեր հունձքերուն անյաջողութեան և արմտիքներու անօրինակ սղութեան, գիւղովին նըմանը չտեսնուած թշուառութեան մը ցանցերէն բռնուած ենք։ Հազը, որուն մշակութիւնը մեր աւագ զբաղումը կը կազմէ, երբեք այսչափ անգթօրէն չէր վարձատրած մեր քրտնաթոր աշխատութիւնը. գէթ տարբեր աշխատութեամբ կարելի լինէր մեղմացնել այս տագնապը. ոչինչ ունինք մեր տուներուն մէջ իբր սնունդ։ Բնակչութեանս մեծագոյն մասը անօթի և հացակարօտ է. նուաղումներ տեղի կունենան. անսուաղութիւնը ոչ ոյժ և ոչ կարողութիւն թողուց մեր վրայ։ Գետնախնձորէ և սիսեռէ պատրաստուած հաց կուտենք, այն ալ մէկ քանի օրն անգամ մը. բաղդաւոր պիտի լինէինք, եթէ սակայն ունենայինք այս սնունդը. մեր անսուաղ զաւակներուն լալահառաչ աղաղակներուն ալ չենք դիմանար։ Մեր յուսահատ ու մաշլ հոգիներուն իբր ամենավերջին յոյսն ու լոյսը ձեզ կը դիմենք արտասուալից. և վստահ ենք որ անօթութենէ չկորնչելու համար դարման պիտի փութացնէք»։

Տիվրիկի Կրասօն գիւղէն կը գրեն յունուար 17 Թուականաւ. «Մենք աւելի քան 300 անձ՝ այս սաստկաշունչ ձմեռուան մէջ հացի կարօտ մնացինք. աշնան, երբ ձեռնունայն դարձանք կալերէն տուն, կռահեցինք այս նօթութիւնը, բայց կը յուսայինք, որ բարերար ձեռքեր մեզի դարման հասցնէին։ Ա՛հ, մեր զաւակներ անսուաղ կը մեռնին. հացի այս պայքարին առջև շուարած ենք. որո՞ւ դիմենք։ Խնդրենք նօթութենէ տառապող խղճալեացս համար օգնութիւն ընձեռել»։

Տիվրիկի Չորս Թաղերու ազգայինք կը գրեն յունուար 26 Թուականաւ. «Ինչպէս շատ տեղեր, նոյնպէս հոս այս տարի ցորենի և ուրիշ բերքերու արտասովոր նուազութեան և գիներու քառապատիկ սղութեան ու մանաւանդ քաղաքիս վաճառաշահ կեդրոն մը չըլլալուն պատճառաւ, այսօր ընտանիքներ շատ մը անչափահաս զաւակներով պատառ մը չոր հացի կարօտը կը քաշեն բոլորովին թշուառ և յուսալքուած. ուստի սովամահ չկորնչելու համար նպաստ կը խնդրենք»։

Տիվրիկի Միրվանա գիւղէն կը գրեն յունուար 19 Թուականաւ. «Գիւղս, որ 30 տուն ընտանիքէ կը բաղկանայ, արմտեաց գներու բարձրանալէն՝ անբացատրելի կարօտութեան մատնուած է և յուսակտուր կը կռուի մահուան դէմ. ինչ սրտաճմլիկ տեսարան է, երբ անմեղ մանկտին կը խնդրէ հաց, տարաբաղդ ծնողքը՝ սուր ճիչերուն անտարբեր մնալով՝ կը լայ. շատեր օրերով անսուաղ անցնելով՝ մեռնելու մէջ մխիթարութիւն գտնել կը յուսան՝ ճար և օգնութիւն կը հայցենք»։

Տիվրիկի Կասմա գիւղէն կը գրեն փետր. 2 Թուականաւ. «Տնտեսական տագնապէն ժողովուրդն արդէն նեղուած, այս տարուան հունձքերու արտակարգ նուազութիւնն ու սղութիւնը բոլորովին թշուառութեան մատնած են գիւղիս աղքատ դասակարգը, այնպէս որ ամեն հոգ մէկ կողմ դրած՝ իր մըտածումի միակ առարկան ըրած է օրապահիկի խնդիրը, և այս վայրկենիս ապրուստի ամեն միջոցներէ զուրկ՝ իրապէս սովի մը ճնշող բեռան տակ կը հեծէ անմխիթար։ Այս ողբալի կացութիւնը կը խնդրենք ընկատի առնել և ձեր նպաստներով մխիթարել գիւղացիները»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ախալքալաք, 21 ապրիլ

Ուսումնական տարին վերջանում է, բայց պիտի կարգաւորվի՞ արդեօք գէթ եկող տարի մեր ծխական դպրոցների ծրագրային հարցի քաօսային դրութիւնը։ Խօսքս, ի հարկէ, միմիայն Ախալքալաքի դպրոցների մասին չէ. մեր բոլոր, մանաւանդ գաւառական, դպրոցներն էլ նոյն դրութեան մէջ են գտնւում։

Տարւայ սկզբին, երբ ուսուցիչները ոտք են դնում ուսումնարան, նրանք չը գիտեն ինչ ծրագրով դասաւանդեն, ինչ դասագըրքով ղեկավարվեն։

Ճիշտ է, թէև գոյութիւն ունեն 1874 թ. և վերջին յանձնաժողովի կազմած ծրագրերը, բայց 1874 թ. ծրագիրը հնացած լինելու պատճառով չէ համապատասխանում ներկայ ժամանակների պահանջներին, իսկ երկրորդը՝ դեռ օրինական սանկցիա չէ ստացել ոչ մեր հոգևոր կառավարութեան և ոչ էլ պետութեան կողմից, այնպէս որ դպրոցական ծրագրային տեսակէտից մեր իւրաքանչիւր ծխական դպրոց ունի իր ուրոյն ծրագիրը, նայած դպրոցը ինչպիսի ուսուցչական կազմի ձեռքումն է։ Իսկ երբ մի տեղ չը կայ հաստատուն ծրագիր, նա փոփոխական է լինելու, մէկ թեքվելով աջ և մէկ ձախ, ինչպէս փոփոխական են մեր դպրոցների ուսուցչական խմբերը։ Այդ հանգամանքներում ոչ թէ դպրոցական գործը մեզանում կը սկսի զարգանալ, բարգաւաճել, այլ հետզհետէ կը թուլանայ և կը հասնի անկման վիճակին։

Եւ մենք փոխանակ նոր սերունդը կրթելու նոր ոգով, նոր շունչով, նոյնիսկ չենք կարող ընթանալ այն ճանապարհով, որով ընթացել էին մեր 80-ական և 90-ական թւականների դպրոցական գործիչները։

Մինչև իսկ դպրոցական լաւ ծրագիր ունենալն էլ դեռ բաւական չէ. հարկաւոր է ունենալ նոր ոգով կազմած ձեռնարկներ, որոնք համապատասխանէին արդի մանկավարժութեան պահանջներին։ Մեր մանկավարժ-մասնագէտները կարծում են, որ եթէ իրանք մի քանի երկտողով հանդէս են գալիս պարբերական մամուլի մէջ և կամ բրօշիւրներով ու քննադատում մեր դպրոցական աննորմալ կեանքը, խնդիրները,—իրանց բարոյական պարտքը լրիւ կատարում են։

Իրօք նրանք շատ քիչ գործ են կատարում։ Այդքանը հերիք չէ։ Անհրաժեշտ է մի մասնագիտական ամսաթերթ կամ օրաթերթ ունենալու միտքը շուտ իրականացնել, որ նա իր հոգածութեան առարկան դարձնէ Կովկասի դպրոցների տնտեսական ու ուսումնական վիճակը, ծանօթացնէ հայ ընթերցողներին, վարժապետներին ուրիշ ազգերի կրթութեան գործի հետ։

Մասնագիտական թերթի բացակայութիւնն է պատճառը, որ դպրոցների վերաբացումից յետոյ թէև բաւական թւով դասագրքեր լոյս տեսան, բայց նրանցից դեռ ոչ մէկը չէ ենթարկվել մեր մասնագէտ մանկավարժների և փորձված ուսուցիչների քննադատութեանը, եթէ հաշիւ առնելու չը լինենք մի քանի թեթև գրախօսականները, որոնք երևացին պարբերական մամուլում։

Այս անկայուն դրութեան հետևանքը այն է լինում, որ մի ուսուցչի ընտրած դասագիրքը մէկ ուրիշը ըստ իր հայեցողութեան անյարմար է գտնում, մէկ ուրիշը, գոյութիւն ունեցող դասագրքերը անպէտք համարելով, անցնում է առարկան թելադրելով ըստ իր բազմաքանչար ուղեղի արտադրութեան, մի խօսքով մի քաօսային վիճակ, որ կարելի է անմահ Խորենացու կլասիկ խօսքերով պատկերացնել. «Այստեղ ոչ կարգ կայ, ոչ կանօն, ամեն ինչ խառնաշփոթութեան մէջ է»…

Են. Են

ՎՐԱՑ ԿԵԱՆՔԻՑ

VI

Անցեալ անգամ ասացինք, թէ ինչ դրութեան մէջ էր Վրաստանի գիւղացիութիւնը 1905—06 թ. թ. յեղափոխական տարիներում։ Որ այդ ազատութեան օրերում Վրաստանի ճնշված ու ամեն կերպ և ամեն բանից զրկված շինականը խիստ մեծ թափով արտայայտեց ազատութեան չափը, որ նա մինչև իսկ, ինչպէս սովորական է այդպիսի խառնաշփոթ ժամանակներում, արեց աւելին և անսպասելին, որ նա իրան աշխատած հաշւելով պատրոնի ձեռքից՝ մինչև իսկ հալածում, սպառնում, սպանում էր այն մարդկանց, որոնցից մի քիչ առաջ կախված էր տեսնում իր գոյութիւնը։ Ահա այսպէս էր այն ազատութեան օրերին. բայց… ամենքին յայտնի է, թէ ինչքան կարճատև և անօգուտ եղան ու անցան այն քաղցր հովերը, որ նրանք ոչ միայն ցանկալի օգուտ չը բերին, այլ մինչև իսկ շատ տեղ աւեր և թշուառութիւն սփռեցին։ Այդպէս էր և Վրաստանի ալեկոծված գաւառամասերում, ուր գիւղացիութիւնը մոռացած իր սովորական բանն ու գործը, իր դաշտն ու արօրը, իր բաղն ու հանդը, մինչև իսկ տունն ու տեղը՝ տարվեց այդ հոսանքով, տարվեց իր ամբողջ էութեամբ. և դա շատ հասկանալի էր. ինչու չը լսել ու չը հետևել նրան, որը խոստանում է ամեն բան, խոստանում ազատել—թափել մինչև այժմ գիւղացու գերի գլուխը. խոստանում է հողի սեփականութիւն, ազատ ապրուստ և իր եկամուտի լիակատար տէր լինելը։

Իսկ հետևանքը. հետևանքը եղաւ այն, որ չը մշակվեց շինականի այգին, դաշտն ու հանդը մնացին խոպանացած, մինչև իսկ հունձի համար գիւղացին ժամանակ չէր գտնում։ Մինչ այդ մինչ այն՝ կարճեցեալ ազատութիւնն էլ անցաւ, չքացաւ։ Հզօր և ամեն բան կարող գիւղացին մնաց թևաթուրկ, շշմած։ Ամեն բանին ուզում էր տիրանալ, բայց իրօք մնաց ձեռքը դատարկ, գրպանը դատարկ, ամբարը դատարկ, զըրկված ամեն ինչից. իր հալածած կալուածատէրն էլ սկսում էր զարթնել ու ոտի կանգնել. Ժամանակը փոխվեց, բաստը կրկին իր շալակը հագաւ. նա կրկին իր կաշու մէջը մտած, իշխանաւորից զօրացած՝ կրկին սկսեց մեծ թափով իր հին դերի մէջ մտնել. Գիւղացին կրկին վիզը ծռած՝ պատրաստ է կատարելու իր կալուածատիրոջ նոյնիսկ անարդարացի պահանջը։ Սկսվեցին անցած, ոգևորված գործերի քննութիւնները. պատասխանատուութեան ենթարկվեցին շատ-շատերը. աքսոր, բանտ, տուգանք գործադրվեցին բաւական մեծ չափով։ 1905—1906 տարիների չը վճարված ղալան էլ չը մոռացվեց. իշխանութիւնը որոշեց վճարել այս 1908 թւին։ Մի խօսքով կալուածատէրը համարեա չը տուժեց, այլ աւելի տուժեց գիւղացիութիւնը։ Եւ ահա այս դառն օրերում, երբ գիւղացին ապրուստ անգամ չունի, սովի է դատապարտված, նրանից պահանջվում է քաւել հին մեղքը. պահանջվում է վճարել նրանից ժամանակներից մնացած ղալան. պահանջվում է ամենայն խստութեամբ, ոչ մի պատճառաբանութիւն լսել չեն ուզում. կալուածատէրերը միմեանց ետևից բողոքներ են ներկայացնում իշխանութեանը, իսկ իշխանաւորը մակագրում է՝ «պահանջել, անյապաղ ի կատար ածել»։ Մինչդեռ գիւղացիք հացի կարօտից գլուխը կորցրած դիմումներ են անում Փոխարքային և խընդրում, որ հաց տան, որ տեղական իշխանաւորները չեն լսում—անտարբեր են, ահա հէնց այդ միևնոյն ժամանակ, միևնոյն գիւղերում տեղական իշխանութիւնը նշանակել է էկզեկուցիա և պահանջում է գիւղացիներից անցեալ տարիների կալուածատէրերին չը վճարած տուրքը (ղալան)։ Ահա այստեղ է այն մեծ վէրը, որ կայ ժողովրդի և իշխանութեան միջև, վէր, որ մնում է դեռ բաց և չէ աջողվում տեսնել լըցված։

Ս. սարկ.

ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ՏԱՌԱՊԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Թէւրիզից, տ. Հ. Ղազիեանից, հանգանակած տեղական հայերից՝ 31 ր. 5 կ. (Նուիրել են—տ. Հ. Ղազիեանց՝ 3 ր., Աթանաս Յովսէփեանց՝ 3 ր., Հ. Օհանէսեանց՝ 3 ր., Աբրահամ Կիրակոսեան՝ 5 ր., մի բժշկուհի՝ 4 ռուբ., «Նուէր ազգութեան նպատակի» 2 ր. 50 կ., Դ. Ղազիեան՝ 2 ր. 50 կ., Ա. Գէորգեան՝ 1 ր. 5 կ., Ն. Լամբէկեան՝ 1 ր., Ն. Անանեան՝ 1 ր., Սափարեան՝ 1 ր., Ս. Մելիք Քարամեանց՝ 1 ր. 50 կ., Յ. Մելիք-Հախնազարեան՝ 1 ր. 50 կ., Փ. Քարամեանց՝ 50 կ. և Ս. Բարխուդարեան՝ 50 կ.)։

ԹԻՒՐՔԱՀԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք—1) Թէւրի քաղաքից, տ. Հայկանոյշ Ղազիեանից, նրա հանգանակած 17 ր. (Նուիրել են Ա. Կիրակոսեան՝ 5 ր., Դ. Ղազիեան՝ 2 ր. 50 կ., մի ոմնից՝ «ազգութեան նպատակի նուէր» 2 ր. 50 կ., Ա. Յովսէփեանց՝ 2 ր., տ. Հ. Ղազիեանց՝ 2 ռուբ., Ս. Մելիք-Քարամեանց՝ 1 ր. 50 կ., Յ. Մելիք-Հախնազարեանց՝ 1 ր. 50 կ.), 2) Ալուպկայից, Յ. Յովնանեանից, հանգանակված տեղական հայերից՝ 38 ր. 70 կոպէկ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Մատնանշում ենք, որ հայ հասարակութիւնը այսօր իր այցելութեամբ պէտք է նպաստէ այն զբօսանքի աջողութեան, որ կազմակերպել է Թիֆլիսի հայուհեաց բարեգործական ընկերութիւնը, որը, համեմատած իր միւս համազգային ընկերութիւնների հետ, շատ բարձր է կանգնած։ Նրա ցոյց տուած գործունէութիւնը թէ անցեալում և թէ ներկայումս շօշափելի է և բեղմնաւոր, իբրև ներհակ միւս բարեգործական ընկերութիւնների։ Ներկայ զբօսանքի ծրագիրը շատ ճոխ է, և համոզված ենք, որ այցելուները մեծ բաւականութիւն կը ստանան։ Մուտքը մեծերի համար 30 կոպէկ է, փոքրերի և աշակերտութեան համար 15 կոպէկ։

◆ «Т. Л.» թերթում կարդում ենք. «Թիֆլիսում ստացված տեղեկութիւնների համաձայն, յայտնի բարեգործ Ալեքսանդր Մանթաշեանը համաձայնութիւն է յայտնել իր հաշւով կառուցանել նոր շինութիւն Թիֆլիսի հայոց Ներսիսեան դպրոցի համար։ Շինութիւնը մտադրվում է կառուցանել Նաղիբեանի հողերում, որի մի կտորը գնել է դպրոցի հոգաբարձութիւնը։ Դպրոցի շէնքի կառուցումը կը նստէ մօտ 400 հազար ռուբլի։ Շինութեան պլանի և նախահաշւի կազմութեան կը ձեռնարկվի՝ հէնց որ վերադառնայ այն պատգամաւորութիւնը, որը մեկնել է Պետերբուրգ այդ նուիրատուութիւնը խնդրելու»։ Այս լուրը սխալ է և բոլորովին անհիմն։ Հաստատ աղբիւրից մենք տեղեկացանք, որ պ. Ալեքսանդր Մանթաշեան բացասել է պատգամաւորութեան դիմումը, յայտնելով որ նա կը սպասէ մինչև նոր կաթողիկոսի ընտրութիւնը և հաստատութիւնը, որից յետոյ նա կարող է զբաղվել այդ հարցով, եթէ կաթողիկոսը այդպիսի առաջարկութիւն կանէ իրան։ Անճիշտ լուրը առաջ է եկել պատգամաւորներից մէկի՝ պ. Ա. Ահարոնեանի մի խփած հեռագրից, մի ուրիշ հարցի առիթով։

◆ Դերասան Արմէնեանը մեզ խնդրում է տպել հետևեալը. «Թիւրիմացութիւնների առաջն առնելու համար, պատիւ ունիմ յայտարարելու ի դիմաց Հալաբարի նորակազմ հայ դերասանական ընկերակցութեան, որ մայիսի 4-ին Հալաբարում տուող «Արշակ Բ.» պիեսի ներկայացման հետ ընկերակցութիւնս ոչ մի կապ չունի»։

◆ Մեզ խնդրում են տպագրել. «Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան խորհուրդը շնորհակալութեամբ ստացել է Ա.-ից պ. Յ. Տէր-Վարդանեանցի միջոցով 29 ռուբլի յօգուտ ընկերութեան»։

◆ Մենք ստացանք հետևեալ նամակը. «Հայոց ազգագրական ընկերութեան խորհուրդը խորին շնորհակալութիւն է յայտնում տիկին Դարիա Յովհաննիսեանին, որ հաճեց մեր ընկերութեան թանգարանական-կովկասագիտական գրադարանին նուիրել զանազան պարբերական հրատարակութիւններ և գրքեր 350 ռուբլու արժողութեան»։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը մի ֆիրմայից յայտարարութիւն է ստացել, որով առաջարկվում է իրաւունք տալ աւտոմոբիլների երթևեկութիւն հաստատել Երևանեան հրապարակի, փունիկուլեօրի ստորին կայարանի, Մուշտայիդի, երկաթուղու կայարանի և Մետեխի բերդի միջև, իւրաքանչիւր նստողից 6 կոպէկ ստանալու պայմանով։

◆ Այսօր Թիֆլիսում կայանալու են վերջին ձիարշաւները։ Սկիզբն է ցերեկվայ 4 ժամից։

◆ Այսօր, կիրակի, Գ. Լվովիչը ժողովրդական համալսարանում կը կարդայ մի դասախօսութիւն՝ «Ազգային հարցը և նրա լուծման եղանակներից մէկը»։ Դասախօսութիւնից յետոյ, կոյր դաշնակահար Կարասիկի, տ. Նաւասարդեանի, Ստօքինի և Տօմաշեվիչի մասնակցութեամբ տեղի կունենայ հանրամատչելի համերգ։ Դասախօսութեան սկիզբն է $10^{1}/_{2}$ ժամին, իսկ համերգին՝ 12-ին։

◆ Ներքին գործերի մինիստրը կարգադրել է փակել Քութայիսի հրէական տերրիտորիալ ընկերութիւնը իր բոլոր բաժանմունքներով։

◆ Մցխէթի վանքը վերանորոգող ժամաժողովը արդէն ձեռնարկել է իր աշխատանքներին։ Բոլոր աշխատանքները յանձնված են Անդրիօլէտտուն։ Սինօդը կրկին յատկացրել է 30,000 ռուբլի։

◆ Թիֆլիսի գեն.-նահանգապետի կարգադրութեամբ Երևանի բնակիչ Ա. Ղարիբեանը, որ ապրում է Թիֆլիսում, աքսորվում է՝ էտապով Օրէնբուրգի նահանգը զինուորական դրութեան ամբողջ ժամանակ։

◆ Կարեազինից «Т. Л.»-ին հաղորդում են, որ անցեալ չորեքշաբթի Ամարասում յարձակում է տեղի ունեցել տեղական կալուածատէր Մանսուր բէկ Մելիք-Շահնազարեանի վրայ։ Յարձակվողները պարպել են մի քանի հրազարկ, որից նա վիրաւորվելով մահացու կերպով սպանվում է։

◆ Մայիսի 2-ին, առ. ժամը 10 և կէսին, ինչպէս «Зак.» լրագիրն է հաղորդում, Խօջիվանքի գերեզմանատանը կայացաւ Բագմաձէի, Բորաձովի, Դեկանոզովի և Կիպիանու հաստատած ծննդկանների կասայի անդամների ընդհանուր ժողովը, որին մասնակցում էին 150 հոգի։ Ժողովում վերջնականապէս որոշվեց, նկատի առնելով որ մինչև օրս բաւարարութիւն չը ստացվեց վերոյիշեալ անձերից, պահանջ ներկայացնել նրանց դատարանով։ Ժողովը ընտրեց լիազօրներ՝ Ցալկամիրձէին, Կավտարաձէին և Արտ. Զօրաեանին, որոնց և յանձնեց դատարանին խնդիրը ներկայացնելու գործը։ Ապա ընտրվեց վերստուգիչ յանձնաժողով։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Խարկովի նահանգական դատարանին յայտնել են բժիշկները, որ մասնաւոր հաւատարմատար Կոլիկինը իր բնակարանում մի քանի ամիս շարունակ ծեծի է ենթարկում Մոսկվայից այնտեղ գնացած արտիստուհի Նարօնովիչին, որը յանձնած է եղել նրան պաշտպանելու իր գործը։ Դատախազութեան կարգադրութեամբ խուզարկութիւն է կատարվել Կոլիկինի բնակարանում, ուր գտել են առանձին սենեակի մէջ բանտարկված Նարօնովիչին սարսափելի դրութեան մէջ։ Վերջինս Ղրիմում ունի մի ամարանոց և բաւականին հարուստ կարողութիւն։ Նրան ուղարկել են հոգեկան հիւանդների բուժարանը։ Խիստ քննութիւն է կատարվում։ Այդ հանելուկային պատմութիւնը ահագին աղմուկ է յարուցել։ («Р.С.»)

◆ Կախաղանի դատապարտված յայտնի էքսպրոպրիատոր Լբօվը ամենահպատակ հեռագիր է ուղարկել Թագուհի կայսրուհուն խնդրելով ներումն շնորհել իրան։ Նա խոստովանել է դատարանին, որ նա արդարև Ալեքսանդր Լբօվն է։

◆ Պոլէսսկայա երկաթուղային գծի վարչութեան մէջ երևան են հանված զեղծումներ։ Ծառայողներից մէկը վաճառել է 1100 տոմսակ ծառայութեան համար պատրաստված տոմսակներից։ («Рѣчь»)

◆ Ապր. 23-ին ոստիկանութիւնը խուզարկութեան է ենթարկել Պետերբուրգի կենտրոնում գտնվող մի քանի տներ և կալանաւորել է մի քանի հոգու։ Այդ կալանաւորութեանը մեծ նշանակութիւն է տրվում։ Նոյն գիշերը Նեվսկում կալանաւորվել են էլի մի քանի երիտասարդներ։ Խուզարկութեան են ենթարկվել Մոտինսկի փողոցի անկիւններում գտնվող մի քանի տներ ևս։ Կալանաւորվածներից մէկի մօտ գտնված են խոշոր գումարներ։ («Рѣчь»)

◆ Ապրիլի 23-ին գիշերը, Մոսկվայում, անգործ Սմիրնովը դաշոյնի մի քանի հարուածներով վիրաւորում է իրան և ապա կախվում։ Պետրոպաւլովսկի հիւանդանոցում մեռել է համալսարանի ուսանող, Զաքուժսկի երկրացիութեան նախագահ, Զագրեբայինը։ Անկերութիւնից տիֆ է ստացել ու մեռել։ Նա շատ ժամանակ սոված է մնացել և դրա շնորհիւ քայքայված օրգանիզմը չէ կարողացել դիմանալ հիւանդութեանը։ («Руль»)

◆ «Рус. Вѣд.» լրագրին հաղորդում են, որ կոմսուհի Ս. Ա. Տօլստոյի հրաւէրով ապրիլի 21-ին Լև Նիկոլայևիչի մօտ են հրաւիրվել բժ. Նիկիտինը և Շչուրովը քննելու պատկառելի ծերունի հետ վերջին ժամանակներս պատահած ուշագնացութեան պատճառները։ Բժիշկները Լև Նիկոլայևիչի առողջութիւնը գտել են ընդհանրապէս բաւարար, իսկ ուշագնացութեան պատճառը համարում են մտաւոր աշխատանքներից առաջացած յոգնածութիւնը և առաջարկել են համապատասխան միջոցներ։

◆ Օդեսայի բանտում քաղաքական յանցանքների մէջ մեղադրվող Սմիրնովա ազգանունով մի երիտասարդ աղջիկ գիշերը նաւթ ածելով իր անկողնի վրայ հրդեհել է։ Հրդեհը բռնել է ամբողջ սենեակը։ Դժբաղդին գտել են կիսակենդան դրութեան մէջ։ Առաւօտեան սոսկալի տանջանքներով վախճանվել է։ («Б. В.»)

◆ Լեհաստանի Կէլեցկայա քաղաքի ոստիկանութիւնը Վարշավայից եկած խուզարկու ոստիկանների օգնութեամբ մի ամբողջ շարք խուզարկութիւններ է կատարել այն շրջանում, ուր սպանվել էր ուսումնարանական վարչութեան կառավարիչ Աֆանասիեվը։ Խուզարկութեան են ենթարկվել փողոցում անց ու դարձ անողները, իսկ երիտասարդները, նոյնիսկ նրանք, որոնք անհրաժեշտ վկայականներ են ունեցել, կալանաւորված են։ Փողոցներում ամայութիւն է տիրում. մագազինները փակվում են վաղ առաւօտից։ Կալանաւորվել են մօտ 200 հոգի։ Սպասվում են նոր խուզարկութիւններ և կալանաւորութիւններ։ («Kur. Lodzki»)

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Մակլակովի ճառի շարունակութիւնը*)

Ասենք թէ դա ոչինչ հետևանք չունեցաւ, բայց ինչ զգացմունքներ էր զարթեցնում դա նրանց մէջ, ով հասկանում էր, թէ ինչու համար գոյութիւն ունի արտակարգ պաշտպանութիւնը, հասկանում էր, որ կրամօլայի դէմ կռւելու պատրուակով կռւում էին ոչ կրամօլա անողների դէմ, ով զգում էր, որ ուժեղացրած պաշտպանութիւնը ուղղված է ոչ թէ մեզ դէմ, այլ հոկտեմբերի 17-ի մանիֆէստի դէմ (ծափահարութիւններ ձախակողմից, նախագահի զանգահարութիւն)։ Կենտրոնի մտցրած հարցապնդումներից դուք գիտէք, թէ ինչպէս էին վարվում դատարանի հետ ուժեղացրած պաշտպանութեան կանօնադրութեան հիման վրայ, գիտէք, թէ որպէս ադմինիստրատորները վերցնում էին քննելու քաղաքացիական գործերը, տալիս էին այդ գործերի վճիռը, դրանով պարծենում էին, չամաչելով իշխանութիւնը այդպէս ի չարը գործ դնելուց։ Կրճատելով ասածներս, ես չեմ բերի երգիծաբանական ժողովածուներ պարտադիր որոշումներից. բնորոշելու համար կը բերեմ միայն Եկատերինոսլավի գեներալ-նահանգապետի մի պարտադիր որոշումը։ Ահա առաջին միջոցը։ Եթէ իմ տանը գտնվեց ռումբ, ես ենթարկվում եմ զինուորական դատարանին (ձայն աջակողմից. «կանօնաւոր է»)։ Իսկ այն դէպքում, երբ անհերքելի կերպով կապացուցվի, որ տանտէրը չէր կարող իմանալ ռումբի ներկայութիւնը, տանտէրը այնուամենայնիւ ենթարկվում է 3000 ր. տուգանքի կամ եռամսեայ բանտարկութեան (ծիծաղ ձախակողմից, աղմկալի ծափահարութիւններ, նախագահի զանգահարութիւն)։ Արդեօք համապատասխանում է այդ հոկտեմբերի 17-ի մանիֆէստի սկզբունքների հետ։ Մեր տեղական իշխանութիւնները դաստիարակված են ուրիշ սկզբունքներով։ Նրանց պէտք է վերացնել, երկաթի ձեռքով նրանց պէտք է ցոյց տալ վերևից, որ սրանից յետոյ կառավարութեան ուրիշ գործելակերպ պէտք է լինի։ Ուժեղացրած պաշտպանութեան դրութիւնը չէ՞ որ քաղաքական հրապարակրից մէկն է։ Առաջին վտանգը, որ սպառնում է մեզ, դա կատարեալ հակասութիւն է մեր տեղական իշխանութիւնների գործակալների մէջն խիստ օրինապահութեան և օրինականութեան այն ըմբռնման մէջ, որ յայտարարեց մանիֆէստը։ Մի ուրիշ սկզբունք, մեր հասարակական կազմի հիմնական սկզբունքը, այդ հասարակական կարծիքի տիրապետութիւնն է նրա մէջ, որպէս հիմք քաղաքականութեան։ Այժմ իշխանութիւնն ասաց, որ նա երկրից ցուցմունքներ է սպասում, թէ ինչ սիստեմով պէտք է ընթանալ, որպիսի քաղաքականութեան հետևել։ Եթէ մինչև հոկտեմբերի 17-ը հասարակութեան ինքնագործունէութիւնը կարող էր միայն բացառութիւն նկատվել, մինչև անգամ մի տեսակ իշխանութեան յափշտակութիւն, հոկտեմբերի 17-ից յետոյ, եթէ նա ընթանում է բղխող հետևանքների կատարեալ գիտակցութեամբ, դա նոր սկզբունք է, որը պէտք է կենսունակ դարձնէ ամբողջ քաղաքականութիւնը։ Եւ կառավարութիւնը այդ բանը շատ լաւ էր հասկանում։ Նա առաջին Դումայի արձակման ամենախառնակ ժամանակ գրում էր, որ կռիւ է մղվում ոչ թէ հասարակութեան դէմ, այլ միայն նրա թշնամիների դէմ, իսկ հասարակութիւնը և հասարակական կարծիքը պէտք է քաղաքականութեան հիմք լինեն։ Այստեղ նստող կառավարութեան ոյժը հիմնված է այն բանի վրայ, որ նա ունի հասարակութեան մի յայտնի մասի աջակցութիւնը և համակրութիւնն ստացել։ Նրա ոյժը նրա մէջն է, որ այս Դուման, նրա մեծամասնութիւնը, գիտակցաբար է նրան պաշտպանում։ Եթէ հասարակական կարծիքն այսուհետև քաղաքականութեան հիմքն է, ուրեմն պարզ չէ՞ արդեօք, որ բոլոր միջոցները այդ իշխանութեան կողմից, որոնք խանգարում են նրան կազմակերպվելու և ձևակերպվելու, արմատականապէս հակասում են հոկտեմբերի 17-ի մանիֆէստի ոգուն։ Նստանդուն փոխադարձ ներգործութիւն երկրի և Դումայի մէջ, Դումայի իւրաքանչիւր անդամի և նրա ընտրողների մէջ, կենդանի հաղորդակցութիւն զարթեցնել և կազմակերպել այդ հասարակական կարծիքը,—դա մի պարտք է, որ բղխում է մեր դրութիւնից։ Նախկին կառավարութեան համար սարսափելի էին դատող, իշխանութիւնը քննադատող մարդիկ, որովհետև նրանք սպառնում էին նրա իշխանութեանը։ Նոր Ռուսաստանի նոր կառավարութեան համար սարսափելի են անտարբեր, լուռ մարդիկ, սարսափելի են չարամիտ, չարախնդաց մարդիկ, որոնք կենդանի շահ չունեն և պատասխանատուութեան գիտակցութիւն ամբողջ Ռուսաստանի ընթացքի համար (ծափահարութիւններ կենտրոնում և աջակողմում)։ Մեզ համար քիչ է երկրի համակրութիւնն ունենալ. մեզ հարկաւոր է ունենալ և երկրի աջակցութիւնը։ Չէ՞ որ նախկին կարգը խորտակվեց նրանից, որ մտադրվել էր մի մեծ երկիր կառավարել Պետերբուրգի կենտրոնի մի հրամանով։ Մենք պէտք է հասկանանք, որ եթէ մենք 500 մարդ եկել ենք ամբողջ Ռուսաստանից, այնուամենայնիւ մենք Ռուսաստանը չենք։ պէտք է հասկանանք, որ նրա վրա պատասխանատուութիւն է դրված Ռուսաստանի կարգի և մեծութեան և նրա ապագայի համար։ Եթէ առաջ հասարակական ինքնագործունէութիւնը վտանգաւոր էր համարվում, այժմ նա անխուսափելի է։ Միայն այն ժամանակ, երբ ինքնավարութեան սկզբունքները կանգնեն քաղաքականութեան բոլոր սկզբնաւորութիւնների մէջ, այն ժամանակ միայն մեր կեանքը հիմնված կը լինի մի սկզբունքի վրա։ Այժմ քաղաքականութիւնը ստացաւ նոր հոսանք։ Մենք պարտաւոր ենք ասել, որ այդ հոսանքից կը գրենք այնպիսի օրէնքներ, որոնք սահմանում են երկրի համար կանոնաւոր, ազատ հասարակական զարգացում, և ինքնուրոյնութեան և ինքնավարութեան իրաւունքները լայն ծաւալ։ Անդադար ճնշումներ գործ դնելով պրոֆէսիօնալ դաշնակցութիւնների դէմ դուք այն կանէք, որ կը ներշնչէք երկրին, թէ ամեն ինչ պէտք է անեն կենտրոնից։ Ես հասարակական ինքնագործունէութեան և ինքնօգնութեան կողմնակից եմ, չեմ կամենում կանգնել ազատասիրութեան տեսակէտի վրա, ես ուզում եմ կանգնել հէնց պետական տեսակէտի վրա։ Ի՞նչպէս հանենք մենք մեր պետութիւնը տուպիկից, որի մէջ նա մտնում է, որ նա լինի ուժեղ, զօրեղ։ Հին ռէժիմի խելագարութիւնն էր երևակայել, որ զօրեղ պետութիւնը կարող է հիմնված լինել թոյլ հասարակութեան վրա։ Դա անմտութիւն էր, բայց աւելի անմտութիւն էր մտածել, որ անձնաւորութեան ոյժը հիմնված կարող է լինել թոյլ պետութեան վրա։ Ոչ, Ռուսաստանը թոյլ չէ կարող լինել, այդ բանը նրան չեն թոյլ տալիս համաշխարհային նպատակները, չեն թոյլ տալիս նրան մեր սեփական պահանջները և ցանկութիւնները։ Ռուսաստանը պէտք է զօրեղ լինի այն ամենով, ինչ որ նպաստում է այդ Ռուսաստանի ոյժին։ Ո՞ւր է այն հրաշքը, որ դուրս կը բերի մեզ ճանապարհի վրա։ Մեր հաւատը, որ Ռուսաստանը դուրս կը գայ տուպիկից, հիմնված է հաւատի վրա դէպի հասարակական ինքնագործունէութեան զարգացման հրաշալի հետևանքները։ Իմաստուն քաղաքականութիւնը այդ ձեռնարկու ոգին դաստիարակելն է։ Այն ժամանակ, երբ այստեղ կարելի է և հասկանում են այդ, պետութեան զանազան մասերում այդպէս չեն դատում։ Այդ տեղական ներկայացուցիչները, որոնք ծանօթ են միայն իրանց նահանգների շրջանին, թեթև սրտով հալածում են պրոֆէսիօնալ միութիւնները։ Նրանք արմատում հանգցնում են հէնց իրան հասարակական թափի սկզբունքները։ Մենք հասկանում ենք հասարակական ինքնագործունէութեան մեծ նշանակութիւնը, հասկանում ենք, որ նրա վրա է մեր բոլոր յոյսը, և ոչ յանուն ազատութեան և արդարասիրութեան, այլ յանուն ցանկութեան Ռուսաստանի զօրութեան և բարգաւաճման պէտք է ասենք, որ այդ քաղաքականութիւնը անկարելի է։ Այժմ կայ համերաշխ մինիստրութիւն, նա պահանջում է համերաշխ պրոգրամ։ Մինչև այդ համերաշխութիւնը չը լինի, ես կասեմ, որ մենք նստած ենք երկու աթոռի վրա, մեր առաջին է մի հարց. ո՞վ կը յաղթի, արդեօք կենտրոնը կը յաղթի տեղերին, թէ տեղերը կենտրոնին։ Մենք այստեղ Դումայի անունից յայտնեցինք Թագաւորին, որ մեր նպատակն է իրագործել հոկտեմբերի 17-ի մանիֆեստը։

---

*) Տես «Մշակ» № 95

(«Հ. Գ.»)

ՄԱՄՈՒԼ

Վերջին ժամանակներս յամառաբար տարածվող շշուկները, որին աւելացաւ ռուս-պարսկական սահմանագլխի վրա՝ Բելասուարում պատահած միջադէպը, առիթ տուեցին պատերազմի հաւանականութեան մասին անհանգստութեան նշաններ ցոյց տալու լրջախոհ թերթերին ևս, որոնք այդչափ ջղագրգռօրէն կատարվող «անկարգութիւններ» մէջ տրամադիր էին ինչ-որ նախամտածված ծրագիր նկատել Թիւրքիայի կողմից՝ օգտվելու Ռուսաստանի ներքին խառնակութիւններից։

Այդ մասին «Р. В.» լրագիրը այն միտքն է յայտնում, որ եթէ Թիւրքիան ընդունակ լինէր բռնանշի դիմելու, սրանից աւելի լաւ վայրկեան նա, ի հարկէ, չէր կարող։ Բայց Թիւրքիան ինքն էլ պատկանում է այն դժբաղդ երկիրների թւին, որոնք արտաքին պարտութիւնից դասեր չեն առնում իրանց ներքին կեանքը բարեկարգելու համար։ Երեսուն տարվայ ընթացքում, սկսած ռուս-թիւրքական վերջին պատերազմից, նա չէ բարձրացել ոչ նիւթապէս և ոչ հոգեպէս։ Եւ Թիւրքիան առաջվայ նման բնկած էր քարանալ «հիւանդ մարդու» դրութեան մէջ։

Պատերազմի համար,—ասում է թերթը,—հարկաւոր է երեք բան. նախ և առաջ՝ փող, երկրորդ՝ փող և երրորդ՝ փող։ Իսկ փող այն երկիրները, որոնք ներքին խաղաղութեան գրաւականը համարում են ընդհանուր ազատութիւնը, երբեք չեն ունենում։ Փող չունի Թիւրքիան ևս. նա կարող էր ձեռք բերել նրան փոխառութեամբ միայն։ Սակայն Ռուսաստանի հետ պատերազմելու համար հազիւ թէ որևէ մէկը համաձայնվի փոխառութիւն տալ այդ վաղուց սնանկացած պարտապանին։ Մեզ հետ կուլտուրական տեսակէտից կանգնած լինելով, համարեա թէ, միևնոյն աստիճանի վրա և զօրքերի թւական քանակով չափազանց ստոր լինելով մեզանից, Թիւրքիան ոչ մի շանս չունի վերջնական յաղթանակի համար, որը պսակվում է կոնտրիբուցիայով։ Այդպիսի պայմաններում երկիրը կրեդիտ էլ չունի պատերազմական նպատակների համար։

Ապա թերթը նկատում է, որ որքան էլ շահագրգռված լինի Գերմանիան, Թիւրքիան այնուամենայնիւ յոյս չէ կարող դնել գերմանական կապիտալի վրա։

Չը նայելով դրան «Р. В.»-ն բայց և այնպէս ստիպված է խոստովանել, որ Պարսկաստանի և նրա սահմանագլխի վրա տեղի ունեցող ըստ երևոյթին մանր թւացող անցքերը առիթ են տալիս բոլորովին օրինական անհանգստութեան։

Վտանգը Թիւրքիայի ոյժի մէջը չէ։ Վտանգը աւելի շատ այդ գործով շահագրգռված պետութիւնների տկարութեան մէջն է կայանում։ Չէ կարելի երաշխաւորել, որ պատերազմական բեմի հարևանութեամբ գտնվող անդորում անկարգութիւնների համար բոնկիչ նիւթեր կուտակվելու դէպքում անցքերը վերջնականապէս չեն դուրս գայ ղեկավարութիւնից և հեղեղի փոխվելով քաշ տալ իր յետևից կառավարութիւնները դէպի այնտեղ, ուր նրանք ամենևին միտք էլ չեն ունեցել գնալու։ Այնտեղ, ուր գործին խառնվում է նացիոնալիզմն ու կրօնական մոլեռանդութիւնը, դիպլոմատիական հաշիւները կարող են փլվել թղթէ տնակների պէս։ Իսկ Արևելքում այդպիսի կրքերը հեշտութեամբ են հրդեհով բռնկվում։ Ուստի անհերքելի սխալ կը լինէր մեր ասիական ծայրագաւառների վրա լաւատեսութեամբ նայել։ Կովկասում մենք պատրաստ պիտի լինենք ամեն բանի։ Սակայն զինվելով, մենք երբեք չը պէտք է մոռացութեան տանք, որ մեր առաջնակարգ նպատակն է այս դէպքում պահպանել խաղաղութիւնը։ Իսկ դրա համար բաւական է Կովկաս ուղարկել մի քանի աւելորդ զօրամասեր և վերադինել մեր կովկասեան ամրութիւնները։ Իսկ այդ նպատակով ամենից առաջ անհրաժեշտ է առողջ քաղաքականութիւն հէնց իրա Կովկասի մէջ։

Առողջ քաղաքականութիւն ասելով ի հարկէ «Р. В.» հասկանում է ոչ այնպէս, ինչպէս «Н. Вр.» լրագիրը, որ կառավարութեանն առաջարկում է կնուտի սիստեմը վերսկսել. ընդհակառակը նա խորհուրդ է տալիս Կովկասում միանգամայն վերացնել կառավարութեան հին եղանակը, որի շնորհիւ ոչնչանան կովկասեան «սեպարատիզմի» շշուկները, և նեխված Թիւրքիան սպառնալիք թուալու միտքը կը դառնայ միանգամայն անհեթեթութիւն։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բերդ, 8 ապրիլի

Ղափանի մահալի Խդրանց գիւղի հասարակութիւնից ստացել եմ մի նամակ *), որը խմբագրութեանդ եմ ուղարկում և որով դիմել են ինձ օգնութիւն խնդրելով։ Այդ նամակին ես պատասխանել եմ յունվարի 19-ին, յայտնելով որ իմ սուղ միջոցներից կարող եմ միայն վճարել 500 ր., այն էլ ոչ թէ միանուագ, այլ մաս-մաս, այսինքն իւրաքանչիւր ամիս 100 ր., մինչև լրանայ 500 րուբլին, միայն այն պայմանով, որ Խդրանցի գիւղացիք ինձ երաշխաւորութիւն տան, որ առաջիկայ տարվանից, կամ երբ կարող կը լինեն, այդ գումարը վերադարձնեն յիշեալ գիւղի օգտին գիւղական շտեմարանի հիմք դնելու համար։ Բայց գիւղացիք այդ երաշխաւորութիւնը չը տուին, և փետրվարի 12-ից նորից գրեցին ինձ տասն անվստահելի ստորագրութեամբ, որ ես այդ գումարը յանձնեմ իրանց միանուագ։ Ես լաւ եմ ճանաչում իմ ծննդավայր գիւղի հասարակութեանը և կասկածում եմ, որ մտածում են փողն ստանալ, իսկ վերադարձնելու համար երբէք չեն մտածի, մանաւանդ որ ես միշտ բացակայ եմ գիւղից, էլ ով պիտի պահանջի և ստիպի նրանց, որ այդ գումարը վերադարձնեն և գործ դնեն իր նպատակին։

Արդ՝ ի նկատի ունենալով վերոյիշեալ հանգամանքները, խոստացածս 500 րուբլուց ներկայովս փոխադրում եմ ձեր լրագրի խմբագրութեան 200 ր., խնդրելով որ բարեհաճէք այդ գումարը յանձնել Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան, որպէսզի նա իր հովանաւորութեան տակ այս գումարն իսկոյն հասցնէ Խդրանց գիւղի հասարակութեանը։ Իսկ մնացեալ 300 րուբլին էլ, իւրաքանչիւր ամիս 100 ական ր. փոխադրելով խմբագրութեանդ, կը վճարեմ երեք ամսվայ ընթացքում, այն պայմանով որ բարեգործական ընկերութիւնը յանձն առնի իր հովանաւորութեան տակ ապագայում էլ այդ գումարով հիմք դնել գիւղական շտեմարանի իմ անունով։ Եթէ Կովկասի հայոց բարեգործական ընկերութիւնը յանձն չի առնի, այդ դէպքում բարեհաճեցէք յետ ուղարկել ինձ այս 200 րուբլին։

Խաչատուր Դր. Յովհաննիսեան

Շուշի, 26 ապրիլի

Շուշի-Գանձակ ճանապարհի շինութեան վարչութիւնը պատիւ ունի յայտնելու ի գիտութիւն հայ հասարակութեան և բարերար նուիրատուների, որ վարչութիւնը մինչև նոյեմբերի 1-ը 1907 թ. ստացել է նպաստ յօգուտ ճանապարհի շինութեան 65,732 ր. 54 կ., որից ծախսել է 56,866 ր. 73 կոպ. (տես «Մշակ» №№ 20, 23, 24). իսկ նոյեմբերի մէկից յետոյ մինչև հիմա ստացել է պ. Արշակ Ղուկասեանից 4000 ր., պ. Դաւիթ Իզզաշեանից 4000 ր., տ. Հոփսիմէ Աղամեանից 2800 ր., պ. Մարկոս Դոլուխանեանից 500 ր., Նոր-Ուրգենչ քաղաքի (Խիվայի խանութիւն) հայ գաղութից 400 ր., բժշկ. Զոխրաբբէկեանից 200 ր., Իվան բէկ Իշխանեանից 20 ր., և այդպէս, նորից ստացված նպաստների գումարն է 11,920 ր., որի համար վարչութիւնը յայտնում է նուիրատուներին իր խորին շնորհակալութիւնը։ Նոր ծախքերի հաշիւը նոյեմբերի 1-ից յետոյ մօտ ժամանակներումս կը յանձնվի տպագրութեան։

Վարչութիւն

Կարճևան գիւղ, 17 ապրիլի

Թոյլ տուեցէք «Մշակի» միջոցով յայտնելու ի գիտութիւն հասարակութեան և նուիրատուների, որ Կարճևան գիւղի ծխ. դպրոցի համար ստացել ենք Բագուից՝ Ստեփան Տէր-Վահանեանից 25 րուբլի, Բերքիից՝ Ոսկան Ցարութիւնեանից 47 րուբլի, որը ժողովել է իր ընկերական շրջանում. (նուիրատուներն են՝ Ոսկան Ցարութիւնեան 10 ր., Սեդրակ Ղալաչեան 10 ր., Իվան Մարտինեց 3 ր., Խ. Ղուկասեան 3 ր., Ներսէս Աբրահամեան 2 ր., Ոմն 2 ր., Ս. Մելքումեան 1 ր., Ա. Կիրակոսեան 1 ր., Ց. Յովսէփեան 1 ր., Միքայէլ Գէորգեան 2 ր., Սարգիս Բարխուդարեան 2 ր., Արտաշէս Աստուածատրեան 2 ր.), Պարսկաստանից՝ պ. Գալուստ Սահակեանից 35 րուբլի (նուիրատուներն են. Գալուստ Սահակեան 10 ր., Եփրեմ Սարգսեան 10 ր., Յովհաննէս Զաղեան 10 ր., Ոմն հրեայ 5 ր.)։

Յայտնելով մեր խորին շնորհակալութիւնը վերոյիշեալ պարոններին, խնդրում ենք ուրիշ քաղաքներում գտնվող մեր հայրենակիցներին ևս օգնութեան հասնել ուսումնարանին, որովհետև գիւղի ուժերները թէ եկամտային տուրքը չեն ուզում տալ և թէ ուսումնարանի համար մշտական աղբիւրներ ստեղծելուն դէմ են, այնպէս որ եթէ դրսից օգնութիւն չը ստացվի՝ ուսումնարանը անպատճառ պիտի փակվի։

Ի դիմաց հոգաբարձութեան՝
Սահակ ք. Տէր-Աբրահամեան

Մայկոպ, 14 մարտի

Որովհետև անցեալում եղել են սրիկայ մարդիկ, որոնք բարեսիրտ մարդկանցից փողեր են հաւաքել տեղումս հայոց եկեղեցի շինելու համար ընտրված մասնաժողովի անունից, և ի նկատի ունենալով, որ վերջին տարիներում այդ արհեստը սովորական երևոյթ է դառել, այդ պատճառով տեղումս դպրոցի երկյարկանի նոր շինութեան համար ընտրված մասնաժողովը պատիւ ունի յայտնել ի գիտութիւն, որ իր անունից փող հանգանակող անձինք պէտք է ներկայացնեն մասնաժողովի կողմից տրված պաշտօնական վկայաթուղթ։ Միաժամանակ խոնարհաբար խնդրում է բարեսիրտ անձանց չը խնայել իրանց լուման ազգօգուտ գործի համար։ Ամեն մի կոպէկ սրտանց կընդունվի։

Նախագահ՝ Ա. Խորասանեան
Գանձապահ՝ С. Н. Чибичевъ
Քարտուղար՝ Ն. Տէր-Յովհաննիսեան

Թիֆլիս, 3 մայիսի

Պ. Լէօն, իր դասախօսութեան մասին «Մշակում» տուածս տպաւորութեան առիթով խօսելով («Վտակ» № 92), ենթադրում է, որ ես՝ կամ ի միւս այլ ունկնդիրների քնած եմ եղել, կամ թէ մեղք եմ գործել։ Այլ խօսքերով՝ երկու դէպքումն էլ անբարեխիղճ եմ վերաբերվել։

Թէ որ աստիճան իրաւացի է պ. Լէօն իր մեղադրանքի մէջ իմ վերաբերեալ, այդ ես թողնում եմ դատելու այն ունկնդիրներին, որոնք չէին քնած պ. Լէօի դասախօսութեան ժամանակ և որոնք նրանից շատ աւելի ուշադրութեամբ են կարդացել իմ յօդուածը ու աւելի ճիշտ ըմբռնել իմ ասածները։

Թող ներվի ինձ ասելու, որ պ. Լէօն իմ յօդուածը կարդալուց յետոյ էլ չէ հասկացել այն պահանջը, որ սովորաբար անվում է պատմաբանից և որ ես յիշել էի յօդուածիս հէնց սկզբում, այլապէս նա մեղադրանքի պարագայ չէր համարի այն հանգամանքը, որ իր դասախօսութեան նիւթն ու ծաւալը շատ մեծ էին։ Երբ պատմաբանը ունի որոշ փիլիսոփայական աշխարհայեացք և մեկնման կէտ, նա իսկոյն կերևայ բանիմաց ընթերցողին կամ ունկնդրին ամենայն պարզութեամբ, որչափ էլ կուզէ թող սեղմված լինի պատմութիւնը, որովհետև պատմաբանի հիմնական աշխարհահայեացքն է այն կմախքը, որի վրա նա հիւսում է իր ամբողջ պատմուածքը։

Այն, որ պ. Լէօն ինձ բոլորովին չէ հասկացել, պարզ է նրա հետևեալ տողերից. «Գ. Խ.-Ազատը գտնում է, որ ես պատմութիւն չեմ տուել, այլ հէքիաթ, քանի որ մանրամասն չեմ բացատրել թէ ինչպէս էին ազդեցութիւնները մտնում մեր գրականութեան մէջ, ինչ ինքնուրոյն երևոյթներ էին նրանք առաջացնում մեր մէջ։ Գ. Խ.-Ազատի հայեացքները [illegible] են (ստորագծութիւնը իմն է. Խ.), և ես ուրիշ կերպ չեմ էլ հասկանում գրականութեան պատմութիւնը»։

Ցաւն էլ հէնց նրանումն է, որ ես վերոգրեալ իմաստով կարծիք չեմ յայտնել պ. Լէօի դասախօսութեան մասին և հէնց բոլորովին ուրիշ կերպ եմ հասկանում գրականութեան պատմութիւնը։

Նախ՝ ազդեցութիւնների կամ գրական հոսանքների ինչ ձևով կամ ինչ ճանապարհներով մի որևէ տեղ մուտք գործելը, որին պ. Լէօն մեծ նշանակութիւն է տալիս, բոլորովին երկրորդական ու երրորդական տեղը պիտի բռնէ պատմաբանի համար։

Ամենաէականը ամենևին այն չէ օրինակի համար, ինչպէս որ պ. Լէօն է կարծում, թէ XVIII դարի քաղաքական գրականութիւնը Հնդկաստանի հայերի միջոցով անցաւ Թիւրքիա, իսկ 60-ական թւականների ռէալիզմը բերեցին Դորպատում ուսանած հայ ուսանողները և այլն։ Գրականութեան պատմութեան մէջ ամենաէականը այն է, որ պարզ լինի, թէ ժողովրդային կեանքի ինչպիսի պայմանների ու հանգամանքների արդասիք է եղել այս ու այն գաղափարը կամ գրականական հոսանքը, թէ այդ գաղափարը փոխադրվելով մի այլ երկիր, ուր բոլորովին այլ կեանքի պայմաններ ու հանգամանքներ են, ինչպիսի փոփոխութեան է ենթարկվում ու ինչ կերպարանք ստանում։ Երբ այդ չը կայ պատմութեան մէջ, այն ժամանակ իրօք որ գրականական հոսանքները քամուց բերված բաների են նմանվում, իսկ պատմութիւնն էլ դառնում է հէքիաթ։

Չէ՞ որ ձեր դասախօսութեան սկզբում ասացիք, որ մի ազգի կամ ժողովրդի գրականութիւնը նրա կեանքի պատկերն է։ Կը նշանակէ՝ մի ժողովրդի գրականութեան հոսանքները հասկանալու համար, անհրաժեշտ է պարզել նրա կեանքի այն տնտեսական, քաղաքական և այլ կողմերն ու պայմանները, որոնց արտայայտողն է հանդիսանում գրականութիւնը։ Բացատրեցէք դուք գէթ մի հատիկ օրինակով այդ էական կողմը, պ. Լէօ։ Օրինակ՝ պարզվե՞ց արդեօք ձեր ունկնդիրների համար, թէ ինչպիսի կեանքի կամ պայմանների արտայայտութիւնն էր Բիւզանդիայից եկած միստիցիզմը և թէ ինչպէս բնոյթ ստացաւ նա հայկական իրականութեան մէջ։ Կամ թէ բաւական էր միթէ ասել, թէ Հնդկաստանի հայերի միջոցով արծարծված XVIII դարի քաղաքական գաղափարները արմատ չը բռնեցին մեր իրականութեան մէջ, որովհետև հայկական կեանքը չէր համապատասխանում այդ գաղափարներին։ Բայց ինչու չէին համապատասխանում. ինչպիսի կեանքի արտայայտութիւններ էին այդ գաղափարները և ինչ էր իրանից ներկայացնում հայկական կեանքը։ Պարզեցէք միթէ դուք այդ և դրա նման մի քանի շատ էական կէտեր։

Մի մոռանաք, պ. Լէօ, որ ձեր դասախօսութիւնը կրում էր «Գլխաւոր հոսանքները հայոց գրականութեան պատմութեան մէջ» վերնագիրը։ Հետևապէս անհրաժեշտ էր, թէկուզ շատ սեղմված կերպով, բնորոշել այդ հոսանքները, պարզել նրանց էութիւնը և ապա ասել՝ թէ ովքեր են եղել մեզնում նրանց արտայայտող գլխաւոր ներկայացուցիչները, ինչպէս են արտայայտել կամ յարմարեցրել նրանք մեր իրականութեանը դրսից եկած այս ու այն հոսանքը։ Դուք այդ չարեցիք, և ինչպէս երևում է ձեր՝ վերևում բերած՝ նախադասութիւնից, չը պիտի էլ կարողանայիք անել, եթէ նոյնիսկ ձեր դասախօսութեան նիւթ վերցրած լինէիք մի փոքրիկ ժամանակաշրջան։

Այդ ես ասում եմ այն հիման վրա, որ դուք կարծում էք, թէ դրսից եկած գաղափարական ազդեցութիւնները մի որևէ երկրում «ինքնուրոյն երևոյթներ են առաջացնում»։ Մենք միանգամայն սխալ ենք համարում այդ կարծիքը և դուք ի զուր էք մեր նախորդ յօդուածը այդ իմաստով ըմբռնել։ Եթէ մենք ընդունում ենք, որ գրականութիւնը մի ժողովրդի կեանքի պատկերն է, ուրեմն հետևողական լինելու համար պէտք է հասկանալ, որ հէնց այդ կեանքն ու նրա պայմանները (տնտեսական, քաղաքական և սօցիալական) պիտի առաջացնեն և փոփոխութիւնների ենթարկեն գրականութեան այս ու այն հոսանքները, այլ ոչ թէ ընդհակառակը։

Այս բոլորից յետոյ, ինչպէս տեսնում էք, պ. Լէօ, ոչ թէ ես եմ քնած եղել ձեր դասախօսութեան ժամանակ, այլ դուք էք քնաթաթախ աչքերով կարդացել իմ յօդուածը։

Խ.-Ազատ

ՖԷԼԻԷՏՕՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՄԵԾ. Պ. «ԲԱՂՔՑՈՒՆ»

«Մեր տան տակին վար կանեմ,
Ձալ ազաւէն քար կանեմ»,
Ասում է ժողովրդական առածը։

Ճիշտ այդ «չալ-ազաւի» դերն էք ընծայել ինձ, պ. «Բաղքցի»։

Եւ չեմ իմանում ինչու «Ներկարարին» և նրա ներկի կարասին էք քարով տալիս, երբ ձեզ յայտնի ժողովում ձեր և «Մոծակի» գլուխ ճերմակացնողը եղել էր մեր երիտասարդ ու տաք «Կարինճը»։

Եւ այն էլ ոչ թէ ներկով, այլ իր ճառով, լոկ խօսքերով։

Անշուշտ ձեզ յայտնի պիտի լինէր, որ իմ կարասին այնքան էլ հեշտ չէր ձեր և «Մոծակի» երիտասարդական սև մազերին ճերմակ գոյնը տալ, որ լուացվելիս իսկոյն չը գնար։

Այդ էլ պ. «Ինուսի» մազերը չէին, որ սևանալու համար իմ կարասին մեղադրեին։

Ընդհակառակն, երբ ձեր մազերի բնական սև գոյնի մասին, երբևիցէ, կասկած է եղել, միշտ յայտնել եմ, որ մեզուական «Բաղքցու» և Նոր-դարական պ. «Ինուսի» մազերի սևութեան մէջ տարբերութիւնը շատ մեծ է։

Նոյն իսկ մի թեթև հայեացք բաւական է, որ իսկոյն իմացվի, թէ ում է, որ սիրում է պլիտակը սևացնելու—սկսած ուսուցչից մինչև կաթողիկոսը, մանաւանդ, եթէ մասնաւոր հաշիւներ ու շահեր էլ կան...

Դուք, յարգելի «Բաղքցի», մեր անմոռաց Գ. Արծրունու, մեծ «Ասիայու» և փոքրիկ «Մոծակի» մեծ. ուսուցիչ, ի զուր էք կարծում, որ եթէ ներկը իմ ձեռքումն է, նրա հետ ինչպէս քէֆս ցանկանայ՝ կարող եմ խաղալ։

Որքան ներկարար էլ լինեմ, ներկի անտեղի գործածութեան կողմնակից չեմ։

Ճիշտ է, առանց ներկի շատ պիտի դժուարանար դիպլոմատի գործը, կրօնաւորի քարոզը, խմբագրի և աշխատակիցների շատ յօդուածները... դեռ թողնենք վաճառականի փտած ապրանքը, բայց չեմ կարող չը խոստովանել, որ քանի ներկը չը կար, խմիչքը համ ունէր, ուտելիքից մարդիկ չէին ստանում այնքան յաճախ փորացաւ։

Երբ ներկը ճանաչեց ուսանողին, գործը բարդացաւ, գաղափարը չքացաւ և նա էլ դարձաւ կարիերիստ-պաշտօնամոլ համալսարանական։

Երբ հանդէս եկաւ ներկը՝ տգեղը գեղեցկացաւ, պառաւը օրիորդացաւ և ծերունին «Նոր-Դարի» խմբագրի պէս երիտասարդացաւ։

Երբ այդ ներկը ոտք դրեց գրականութեան շեմքում, արդարն՝ անարդարից, կեղծրն՝ անկեղծից, սուտը՝ իսկականից և բարեկամը՝ թշնամուց զանազանելը դժուարացաւ... Ո՞ր մէկն ասեմ ու խոստովանեմ...

Գոհ եմ, որ դուք ութսուն տարեկանում, դեռ սև մազերով մնացած, ծերութիւնը յանձն չէք առնում և պատրաստ էք, որպէս աշակերտ, պատկական մի ֆէլիէտօն էլ գրելու և մեր «Մոծակի» խմբագրութեանը ուղարկելու։ Խմբագրութեան կողմից պատիւ ունեմ յայտնելու, որ որքան էլ նա ձեր ուղղութեան դէմ լինի, քանի որ ընդդէմ քաղկեդոնականի ձեր հաստատ համոզմունքների արդիւնքը կը լինի, սիրով կընդունվի։ Համոզված գրողների այժմ մեծ սով է։ Գուցէ ասէք՝ այժմ ուշ է, բայց չէ՞ որ բաղդաւորների համար ամեն օր Զատիկ է։

Մնամ պատկական ձեր ֆէլիէտօնին սպասող, նոյնպէս ձեր աշակերտ՝

Ներկարար

---

*) Յիշեալ նամակը, որ պ. Խ. Յովհաննիսեանն ուղարկել է խմբագրութեանս, շատ տխուր գոյներով է նկարագրում Խդրանց գիւղի ներկայ տնտեսական դրութիւնը։ Այդ նամակից երևում է, որ գիւղը տնտեսականապէս քայքայված դրութեան մէջ է գտնվում, իսկ այդ դրութիւնը, որ ներկայումս չափազանց սուր երևոյթ է ստացել, սկիզբը է առել դեռ սրանից երեք տարի առաջ։ Այսպէս՝ երեք տարի առաջ գիւղն ունէր 140 լծկան եզ, իսկ այժմ ունի միայն 64 հատ, 98 կովից այժմ մնում է 31-ը միայն, 380 այծից՝ մօտ 100-ը նայյն։ Գիւղացիները ներկայումս մօտ 5000 ր. պարտք ունեն վաշխառուներին, մինչդեռ սրանից երեք տարի առաջ այդ պարտքը 900 րուբլուց չէր բարձրանում։ Տնտեսական այդ քայքայման քիչ չէ նպաստել և այն հանգամանքը, որ 1900—04 թւականների ընթացքում, շարունակ չորս տարի, գարնան սկզբից մինչև աշնան վերջը, երկրագործական աշխատանքների ամենաթանկ ժամանակաշրջանում, գիւղացիք ստիպված են եղել ձրիաբար աշխատել Ղափանի պղնձահանքից մինչև Գօրիս պօստային ճանապարհ շինելու վրա։ Այդ անպաստ պայմանին անմիջապէս յաջորդել են հետեւեալ 1905 թ. հայ-թաթարական կոտորածի ընդհարումները, որի հետևանքով ցանքսերը մնացել են երեսի վրա։ Ապա մէկ անգամ քայքայված տնտեսութիւնը շարունակել է ընթանալ անհօրմալ ու կործանիչ ընթացքով, և այսպէս՝ չեն ուշացել անցեալ տարվայ արդէն ծանօթ անբերրիութիւնն ու այս տարվայ սովը, որոնք արդէն պատկերը կատարեալ են արել այդ՝ առանց այն էլ անցեալում խիստ համեստ տնտեսութեամբ կառավարվող գիւղում։

Ծ. Խմբ.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

50-ԱՄԵԱԿ ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ

Նոր-Ջուղա (Սպահան), 25 փետր.

Այս տարի լրանում է Նոր-Ջուղայի Ս. Կատարինեան օրիորդաց դպրոցի 50-ամեակը։

1858 թւից այս կրթական ազգային հաստատութեան մէջ դաստիարակվել են հարիւրաւոր աշակերտուհիներ։

50 տարի շարունակ այս օրիորդաց դպրոցը նպաստել է Նոր-Ջուղայի իգական սեռի կրթութեան գործին, որ չափով պայմանները ու միջոցները ներել են։

Նոր-Ջուղայի երկսեռ դպրոցաց հոգաբարձական և ուսուցչական միացեալ ժողովում որոշվել է կատարել օր. դպրոցի 50-ամեայ յոբելեանն այս տարի մայիսի 25-ին, տալով շքեղ հանդէս (գրական, երաժշտական, երգեցողական և թատերական մասերից) Նոր-Ջուղայի ազգային դպրոցներում։

Ս. Կատարինեան օրիորդաց դպրոցն այժմ ունի ութը տարվայ դասընթացք (ա, բ, գ բաժանմունք և Ա, Բ, Գ, Դ, Ե դասարաններ)։

Անհրաժեշտ պահանջ է՝ կազմակերպել այս կրթական օգտակար հաստատութիւնը և դնել ժամանակակից մանկավարժական հիմքերի վրա։

Դժբաղդաբար միակ արգելքը դպրոցի նիւթական միջոցների սակաւութիւնն է և եկամուտների պատահական լինելը։

Ցանկալի է, որ դպրոցի յիսնամեակը կապվի ճիւղապէս ապահովելու խնդրի հետ։

Այս կարևոր նպատակն իրագործելու համար պէտք է աշխատել թէ Ջուղայում և թէ բոլոր գաղութներում, ուր կան ջուղայեցիներ, կազմակերպել դրամական նպաստներ ժողովելու գործը (միանուագ կամ տարեկան), որպէսզի հիմնվի «անձեռնմխելի դրամագլուխ» Ս. Կատարինեան օրիորդաց դպրոցի անունով։

Անշուշտ մեծ բարոյական պարտականութիւն կայ ջուղայեցի տիկինների և օրիորդների վրա եւ՝ այս ուղղութեամբ գործելու 50-ամեակի առիթով։

Լիայոյս ենք, որ այն բոլոր յարգելի ջուղայեցիները, յատկապէս Կալկաթա, Բոմբայի, Դաքա, Ռանգուն, Սինգափուր, Բաթաւիա, Սուրաբայիա և ճաւայեան այլ քաղաքներում բնակվողները, որոնց սրտերին մօտ է իգական սեռի կանոնաւոր կրթութեան և դաստիարակութեան գործը, անպատճառ ամենայն պատրաստակամութեամբ և սիրով կը նպաստեն «անձեռնմխելի դրամագլուխ» կազմելու կարևոր խնդրին։

Հոգաբարձութիւն Նոր-Ջուղայի
ազգ. երկսեռ դպրոցաց
Առաջնորդական փոխանորդ Պարսկա-Հնդկաստանի և վերատեսուչ դպրոցաց՝
Բագրատ վարդ. Վարդազարեան
Ուսուցչական խումբ Նոր-Ջուղայի
ազգ. երկսեռ դպրոցաց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիական զօրերի թունաւորումը.— Մօտ ժամանակներս Ֆրանսիայում երևան են հանված մի շարք սոսկալի չեղծումներ, որ կատարել են ֆրանսիական զօրքին միս մատակարարող անասնապահներն ու մսագործները։ Հիւանդ անասունների և վարակված մսի մեծ առևտուր է եղել ընկված յատկապէս զօրքերի մէջ սպառելու նպատակով։

Դեռ նա չէին լռել ֆրանսիական զօրքերի մասսայական թունաւորման մասին տարածված լուրերը, այժմ էլ սկսվել է նոյն բնաւորութեամբ մի ուրիշ գործ։

Պարզվում է, որ տարիներ շարունակ ահագին քանակութեամբ բոլորովին փտած ու վարակված կօլբաս, սօսիսկաներ և կօնսերվներ են եղել մատակարարում զօրքին։

Կատարված քննութիւնը ապացուցանում է, որ կապալառուներից շատերը յատկապէս առնում էին ամեն տեսակ փտած ու հոտած մսեր զօրքի համար սօսիսկաներ պատրաստելու նպատակով։

Այդ մերկացումները մեծ զայրոյթ են առաջ բերել Ֆրանսիայի հասարակական շրջաններում։ («Сов. Сд.»)

Առաջին սուֆրաժիստկան Պարիզում.— Պարիզի կանայք իրաւահաւասարութեան համար մղվող կռւի մէջ առաջ են անցել Եւրոպայի բոլոր կանանցից։ Պարիզը այժմ ունի իր առաջին սուֆրաժիստկային. նրա անունն է Ժաննա Լալօէ։

Այդ համարձակ աղջիկը, իշխանութեան ներկայացուցիչների հետ խռանդուն կռիւ մղելուց յետոյ, դրել է իր թեկնածութիւնը առաջիկայ համայնական ընտրութիւնների ժամանակ Սեն-Ժօրժ քաղաքամասում։

Սկզբում քաղաքապետը (մէրը) մերժել է տեղ յատկացնել կանանց, ուր նրանք կարողանային հաւաքվել ընտրութիւնների համար։ Բայց, երկար բանակցութիւններից յետոյ, Ժաննա Լալօէին աջողվել է ապացուցանել, որ օրէնքը չէ արգելում կանանց մասնակցել համայնական ընտրութիւններին, և դրա համար պրեֆեկտը ապօրէն բան արած չի լինի, եթէ տեղ յատկացնի հաւաքվելու համար։

Ժաննա Լալօէի ծրագիրը, որ յայտնի է իբրև անկախ սօցիալիստուհի և կանանց հարցի պաշտպան, շատ քիչ բանով է տարբերվում սօցիալ-դեմօկրատների ծրագրից։

Ինքնըստինքեան հասկանալի է, որ Ժաննա Լալօէն ամենևին շանսեր չունի ընտրվելու համար, որովհետև պասիվ ընտրողական իրաւունք վայելում են տղամարդիկ միայն։

ԻՏԱԼԻԱ

Լեհական պատգամաւորութիւնը պապի մօտ.—«Berliner Tageblatt» լրագրի Հռոմի թղթակիցը հաղորդում է, որ պապը ընդունել է Պրուսիայից լեհական յայտնի եպիսկոպոս Լիխօվսկու առաջնորդութեամբ իրան այցելութեան գնացող ուխտաւորներին։

Լեհական պատգամաւորութեան ողջոյնի ճառին Պապը պատասխանել է. «Ամեն մի ընտանիքում հայրը ամենից աւելի սիրում է այն զաւակներին, որոնք տանջվում են, այդ պատճառով ես առանձնապէս սիրում եմ ձեզ, լեհերիդ։ Ես գիտեմ ձեր խորին սէրը դէպի կաթոլիկ եկեղեցին և գիտեմ նաև, որ դուք միշտ էլ կը մնաք նրան հաւատարիմ զաւակներ»։

Գերմանական մամուլը մտահոգութեամբ աշխատում է գուշակել այն հարցը՝ թէ պապի այդ խօսքերը որևէ քաղաքական իմաստ պարունակում են իր մէջ թէ ոչ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

2 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Վաղը Նօվիցկու նախագահութեամբ մի խորհրդակցութիւն է կայանալու ռուսական շաքարը Պարսկաստան արտահանելու հարցի մասին։

Դումայի դատապարտված անդամներին հեռացնելու գործերով զբաղվող մասնաժողովը Դումայի կանոնադրութեան 12-րդ յօդուածով հաստատված մասնախմբին յանձնեց Պուրիշկևիչի յայտարարութիւնը՝ մասնաժողովի կազմից իր հեռանալու մասին։ Մասնախումբը որոշեց վերադարձնել Պուրիշկևիչին իր յայտարարութիւնը, նկատի առնելով որ նրա մէջ մասնաժողովի հասցէին անհամապատասխան դարձուածքներ են գտնվում։

Բիւջէտային մասնաժողովը երկաթուղային վարչութեան եկամուտները որոշեց 31,267,711 ռ., ծախքերը 31,540,351 ռ., արտակարգ ծախքերը՝ 5 միլիոն։

Պրիամուրեան գեներալ-նահանգապետը ներքին գործերի մինիստրութեանն է ներկայացրել մի նախագիծ Պրիամուրեան շրջանի և Ռուսաստանին պատկանող Սախալինի կառավարելու ձևը վերակազմելու մասին։ Մտադրութիւն կայ հիւսիսային գաւառներից նոր Կամչատկեան շրջան կազմել, Վլադիվօստոկը դարձնելով առանձին զինուորական նահանգապետութիւն, իսկ Սախալինում պահել մօտաւորապէս նախկին կազմը։ Մինիստրութիւնը նախագիծը մշակելուց յետոյ կը յանձնէ մինիստրների խորհրդին։

ԿԻԵՎ։ Դնէպրը դուրս գալով իր ափերից, Չիգիրինսկի գաւառի սահմաններում ծածկել է 144 գիւղ, 1178 դեսեատին արօտատեղի և բանջարանոցներ։

ՕԴԵՍՍԱ։ Երեքամեայ ընդհատումից յետոյ, համալսարանում կայացաւ հանդիսաւոր տարեկան ակտը. ռեկտորը ճառ արտասանեց և յոյս յայտնեց, որ այսուհետև համալսարանում վերջնականապէս կը հաստատվի միայն գիտութիւնը։

ՌԵԱԶԱՆ։ Ռեազանում, Պրօնսկում, Սապօժկում, Ռանենբուրգում գաւառական պարագլուխների նախագահութեամբ կազմակերպվում են հեղեղներից վնասվածների նպաստամատոյց յանձնաժողովներ։

ԽԱՐԿՕՎ։ Ալէքսանդրովսկի մօտ անցեալ գիշեր երկու ապրանքատար գնացքներ դիպան իրար։ Երկու շոգեմեքենայ ջարդվել են, ապրանքներով լի 15 վագոններ նոյնպէս ջարդ ու փշուր են եղել, 10-ը վնասվել են, ծանր վիրաւորված է կայարանի ժանդարմը. 7 ճանապարհորդ ծանր կերպով ջարդուածքներ են ստացել։

3 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետերբուրգի հեռ. գործ. տեղեկութիւնների համաձայն, մայիսի 1-ը բոլորովին հանգիստ է անցել և աշխատանքները իրանց սովորական ընթացքով շարունակվել են Կալուգայում, Կիէվում, Լիֆլանդիայի նահանգի քաղաքներում, Պէրմում, Թիֆլիսում, Խարկօվում և Լիբավայում։ Գործադուլ են արել բանւորութեան փոքրամասնութիւնները, մեծ մասամբ տպարաններում,—Եկատերինբուրգում, Կէրչում, Մոսկվայում, Նովօչերկասում, Պետերբուրգում, Ռեվէլում, Սարատովում, Սմոլէնսկում և Սիզրանում։

ՌԻԳԱ։ 6-օրեայ քննութիւնից յետոյ զինուորական դատարանը վերջացրեց այն 77 անձերի գործը, որոնք մեղադրվում են 1905 թ. Գազէնպօտսկի գաւառում խռովութիւն կազմելու մէջ, որի նպատակն էր տապալել գոյութիւն ունեցող պետական այժմեան կազմը։ Դատարանը չորսին դատապարտեց մահվան պատժի, 12-ին 6-ամեայ աքսորի, 14-ին տաժանակիր աշխատանքների, 37-ին արդարացրեց և այլն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Վերջին ժամանակներս մամուլում երևացած լուրերը՝ թէ մինիստրների խորհրդի նախագահ Ստոլիպինը շուտ արձակուրդ է ստանալու երկար ժամանակով, հիմքից բոլորովին զուրկ են։

ԿԻԵՎ։ Չէմստվօյի, ուսումնարանական շրջանի և միւս հաստատութիւնների ներկայացուցիչների ժողովում վճռվեց բանալ արհեստաւորաց 12 դպրոցներ, իւրաքանչիւր գաւառում մի-մի հատ, գիւղատնտեսական ուսումնարանների բնաւորութեամբ։

Արտաքին

3 մայիսի

ԼՕՆԴՕՆ։ Ռէյտէրի գործակալութեան տեղեկութիւններին նայած, չինական կառավարութիւնը վճռել է ձեռք գցել ներքին հեռագրագծերին տիրապետող ընկերութիւնների բոլոր փայերը։ Կառավարութիւնը, իր ձեռքում ունենալով այդ գծերը, նպատակ ունի հեռագրական ցանցը հասցնել Մանջուրիա, Մոնգոլիա և Տիբէտ և տարիֆը պակասեցնել։

Հրատարակված է նոր կապոյտ գիրք՝ 1907 թ. յունվարի 15-ից մինչև 1908 թ. ապրիլի 2-ը Մակեդոնիայում տեղի ունեցած դէպքերի մասին։

ՊԷԿԻՆ։ Ճապօնիան հրաժարվեց քննել Չինաստանի այն առաջարկութիւնը, թէ Ճապօնիան պէտք է դադարէ Սինմինտին-Ֆակումին երկաթուղագծու կառուցմանը հակառակել։ Ճապօնական կառավարութիւնը առանձնապէս բացասական կերպով է վերաբերվում դէպի այն շրջանի հաստատումը, որի սահմաններից դուրս թոյլատրվի նոր երկաթուղագիծ կառուցանել, որ զուգընթաց լինի հարաւ-մանջուրական երկաթուղագծին։

ԼՕՆԴՕՆ։ Կալկաթայից լրագիրները տեղեկութիւններ են ստացել, որ երէկ այնտեղ մի ռումբ է պայթել։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ։ Դանիական ռիկստագի և իսլանդական ալտինգի անդամներից բաղկացած մասնաժողովը, որին պաշտօն էր դրված կարգի բերել Դանիայի և Իսլանդիայի յարաբերութիւնները, այժմ մի գծուցագիր է պատրաստել, որի համաձայն Իսլանդիան Դանիայի հետ միասին կազմում է միացեալ պետութիւն, որով Իսլանդիան, իբրև ազատ և անկախ երկիր, միացած է Դանիայի հետ ընդհանուր թագաւորով, որը այսուհետև էլ կանուանվի Դանիայի և Իսլանդիայի թագաւոր։ Դանիական պետական գանձատունը Իսլանդիային միանուագ վճարում է 1,500,000 կրօն։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԸՆԴՈՒՆՈՂՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Է. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Ե. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Փորձված սերմեր
ՍԵՐՄԵՐ
ցանելու համար
ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ
ԾԱՂԿԱՅԻՆ
ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
Պրէյսկուրանտն ուղարկվում է ձրի
Кавказское Т-во Сѣмянного Хозяйства Квеесъ и К-о
Тифлисъ, Михайловск. пр. № 55.
25—22

ԲԺՇԿԱՊԵՏ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻՆ
մեկնեց Պեատիգօրսկ (Կովկ. հանք. ջրերը)։
Հասցէն՝ Верхній бульваръ д. кн. Гирей.
10—1

ԲԺԻՇԿ
Ա. Միխիթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Օլօլակ, Բեհբութեան փողոց № 33.
(ա. օ.) 100—44

K 100
SOUFRE SUBLIMÉ
A. BOUDE & FILS
MARSEILLE
LES
PLUS HAUTES
RÉCOMPENSES

Վազերի բժշկութեան համար
ԱՄԵՆԱԼԱՒ
Ծծումբը
(ՔՕՔՈՒՐՍ)
է
Աշխարհահռչակ
ՄԱՐՍԷՅԼԻ
„ԲՈՒԴ"
գործարանի ծծումբը
(Զը կորցնէք պարկի նկարը՝ որ չը սխալվէք)
Գումարով գնողներին արժան առաջարկում է Կ. Կ. ՕԶԻԱՆԴԵՐԸ, Թիֆլիս, Բեբուտովսկայա փողոց, № 33.

Առևտրական դպրոց
Կառավարչական իրաւունքներով
Վերատեսուչ հիմնադիր
Յ. Զ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆ
1-ին և 2-րդ դաս. ընդունել. քննութիւնները մրցակ. դպր. ծրագրով մայիսի 30 և 31-ին
Հաշւապահութ. ամառ. կուրսեր
Կոոպերատիվ ընկ. հաւանութեամբ
աւարտել է Ս.-Պ. Բ. կոմմ. բարձր կուրսերը
Զբաղմունքների սկիզբը մայիսի 15-ից
Կուրսերի վճարը 60 ռուբլի
Թիֆլիս, Աւճալեան փողոց սկզբին 1-ая Тумановская ул. с. д. № 13.
(Հ. Կ. Կ.) 5—1

ДАМЫ И ДѢВИЦЫ!
Если желаете всегда блистать
КРАСОТОЮ,
МОЛОДОСТЬЮ,
ЗДОРОВЬЕМЪ,
употребляйте непремѣнно
Кремъ „КАЗИМИ" Метаморфоза
АНГЛІЙСК. ПАТЕНТЪ
BY ROYAL LETTERS PATENT
Кремъ „КАЗИМИ" БЕЗСПОРНО-РАДИКАЛЬНО удаляетъ ВЕСНУШКИ, УГРИ, ПЯТНА, МОРЩИНЫ, и дѣлаетъ кожу лица СВѢЖЕЙ И ЮНОЙ.
ПРОДАНО УЖЕ БОЛѢЕ МИЛЛІОНА БАНОКЪ.
Въ ТЫСЯЧАХЪ писемъ представительницы прекраснаго пола БЛАГОДАРЯТЪ Г. „КАЗИМИ" за его блестящее изобрѣтеніе, СОХРАНИВШЕЕ И МНОГИМЪ ВЕРНУВШЕЕ ихъ обаяніе.
Для огражденія себя отъ покупки навязываемыхъ подражаній и фальсификатовъ обращайте особое вниманіе на слѣдующіе отличительные признаки Крема „КАЗИМИ" Метаморфоза: 1) на внутренней сторонѣ банки бѣлую, рельефную подпись Cazimi, 2) АНГЛІЙСК. ПАТЕНТЪ, 3) рисунокъ головки мальчика съ надписью „ВСЕРОССІЙСКАЯ ВЫСТАВКА 1896 г." и 4) приложенный къ банкѣ рисунокъ „ИСТОЧНИКЪ КРАСОТЫ", утвержденный Департ. Торг. и Мануфакт. за № 4683.
23, մ. 5, 25)
5—2

ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ
ԿՕՇԿԵՂԷՆ
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽԱՆԻԿ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿ.
Ամեն տեսակ մօդայի ձևերի. գտնվում է բոլոր յայտնի մագազիններում.
ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
С.ПЕТЕРБУРГЪ
Իսկականը այս կնիքն ունի իր վրա՝
ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՌԻԳԱՅՈՒՄ ԿԻԵՎՈՒՄ
ԽԱՐԿՕՎՈՒՄ ՕԴԵՍՍԱՅՈՒՄ ՌՈՍՏՕՎՈՒՄ Դ/Դ ԿԱԶԱՆՈՒՄ
ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳՈՒՄ ԻՐԿՈՒՏՍԿՈՒՄ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՏԱՇԿԵՆՏՈՒՄ
Նիժեգորոդեան տօնավաճառում
Իրբիտեան տօնավաճառում
ԳՈՒՄԱՐՈՎ ՎԱՃԱՌՔԸ
կատարում է
„ԼԷՕՊՈԼԴ ՆԷՅՇԷԼԵՐ"
ՌՈՒՍԻՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ
ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ
ԱՅԴՏԵՂ ԿԱՅ ՊԱՀԵՍՏ ԿԱՇԿԵՂԷՆԻ Ռուսական և արտասահմանեան արդիւնաբերութեան
ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ Ռուս-ամերիկական ռետին. մանուֆակտուրային ընկերութեան
Կրեմ և Ապրետուրա կօշկեղէնի համար
(Տ. Կ.) 100—24
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿԵՐ.

Типографія „[illegible]" Асака Мургасіанова с. С. Ч.